«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2017

ՆԱԽԱԲԱՆ

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի (ԵԳՊԱ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է Ակադեմիաի ներկայացրած դիմումի համաձայն: Հավատարմագրման գործընթացը կազմակերպվում և համակարգվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 3 տեղացի փորձագետներից: ԵԳՊԱ-ն միաժամանակ անցնում է միջազգային հավատարմագրում Գերմանիայի Ճարտարագիտության, ինֆորմատիկայի, բնական գիտությունների և մաթեմատիկայի հավատարմագրման կենտրոնի կողմից: Փորձագիտական խմբում ներառված էին երեք միջազգային փորձագետներ Գերմանիայից և Ավստրիայից: Հավատարմագրման գործընթացը ֆինանսավորվել է ՏԵՄՊՈՒՍ-ի GOVERN ծրագրով: Ծրագրի համակարգողն է ԵԳՊԱ-ն:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, եվրոպական և հայաստանյան փորձագետների առջև դրված էր երկու խնդիր՝

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,
2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային զարգացումներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (ԲԿԵՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Այս զեկույցը պարունակում է Երևանի գեղարվեստի պետական ակդեմիայի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետների գործընկերային գնահատման դիտարկումները՝ ԲԿԵՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 9

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 14

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 14

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 14

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 18

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 18

ՉԱՓԱՆԻՇ I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ 20

ՉԱՓԱՆԻՇ II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 22

ՉԱՓԱՆԻՇ III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 26

ՉԱՓԱՆԻՇ IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ 31

ՉԱՓԱՆԻՇ V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ 34

ՉԱՓԱՆԻՇ VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ 37

ՉԱՓԱՆԻՇ VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 41

ՉԱՓԱՆԻՇ VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 44

ՉԱՓԱՆԻՇ IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 46

ՉԱՓԱՆԻՇ X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 50

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ 53

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ 54

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 63

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 68

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 69

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 70

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ԵԳՊԱ փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ ԵԳՊԱ-ն իր առաքելությունն է համարում «տրամադրել բարձրագույն կրթություն՝ իրականացնելով բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրեր արվեստի տեսության, կերպարվեստի, դեկորատիվ կիրառական արվեստի, դիզայնի և ճարտարապետության ոլորտներում՝ ակադեմիական և արդի մոտեցումների կիրառման, ստեղծագործական և կրթական գործընթացները հասարակական կարիքներին համապատասխանեցման միջոցով, նպաստել ազգային մշակույթի և տնտեսության զարգացմանը՝ պատրաստելով ազգային ու միջազգային մակարդակներում մրցունակ և բարձր որակավորում ունեցող մասնագետներ, ինչպես նաև հարատև կրթությանը պատրաստ քաղաքացիներ, զարգացնել արվեստի հետազոտությունը՝ նպաստելով գիտական մտքի և ազգային մշակույթի տարածմանը, ազգային արժեքների ձևավորմամբ նպաստել հասարակության համախմբմանը և գեղագիտական ճաշակի բարձրացմանը»:

Փորձագիտական խումբը նշում է, որ ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը ընդհանուր առմամբ համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ գնահատվել են ՌԾ-ի թերի կողմերը, մասնավորապես նոր ՌԾ-ում սահմանավել են բուհի տեսլականը, առաքելությունը, արժեքները, ռազմավարական ուղղությունները, նպատակները և խնդիրները, խնդիրների իրականացման մոտեցումները և յուրաքանչյուր նպատակի կատարողականի ցուցիչները, ինչպես նաև խնդիրների իրականացման համար նախատեսված գործողությունները, դրանց հնարավոր խոչընդոտները, պատասխանատուները, կատարման ժամկետները և հաջողության ցուցիչները: Միաժամանակ, փորձագիտական խումբը նշում է, որ ՌԾ խնդիրները ներկայացնող կատարողականի ցուցիչների պլանավորված արժեքները չունեն հիմնավորումներ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ բուհի կազմակերպական կառուցվածքում կատարվել են որոշ փոփոխություններ (ՈԱԿ, հետազոտական կենտրոն, կարիերայի կենտրոն), որոնք միտված են կրթության որակի բարելավմանը, սակայն կառավարման համակարգը դեռևս հետագա բարեփոխումների կարիք ունի: Կառավարման համակարգը կապված չէ ռազմավարական խնդիրների և նպատակների հետ: Չնայած այն բանին, որ գործում են բուհերին բնորոշ հիմնական ստորաբաժանումներ, առկա է կազմակերպչական կառույցների ոչ արդյունավետ տեղաբաշխում, որը բուհի առաքելության և հիմնական նպատակների իրականացման համար ռիսկային է: Մասնավորապես, արդյունավետ չէ ունենալ ոչ բավարար ռեսուրսներով գործող ստարաբաժանում (հետազոտական կենտրոն) կամ ավելորդ կառավարման օղակներ, որոնք կարելի է միավորել (ուսումնական վարչության ստորաբաժանումները) ռեսուրսները առավել արդյունավետ օգտագործելու համար: Սակավ է արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացում:

ԵԳՊԱ 2 ֆակուլտետներում իրականացվում է 8 բակալավրական և 8 մագիստրոսական կրթական ծրագրեր (Դիզայն, Համակարգչային գրաֆիկա, Հագուստի մոդելավորում, Կիրառական արվեստ, Գրաֆիկա, Արվեստաբանություն, Գեղանկարչություն և

Քանդակագործություն), ինչպես նաև մեկ հետբուհական կրթական ծրագիր (Կերպարվեստ՝ Դիզայն, Դեկորատիվ և կիրառական արվեստ մասանգիտացումներով): Բուհի կրթական ծրագրերը ընդհանուր առմամբ համահունչ են առաքելությանը, սակայն բուհում առկա են կրթական ծրագրեր, որոնք վերնայման կարիք ունեն: Բուհը մեկնարկել է ծրագրերի վերանայումը 4 ՄԿԾ-ներից (Դիզայն, Հագուստի մոդելավորում, Համակարգչային գրաֆիկա, Կիրառական արվեստ)՝ հետևելով աշխատաշուկայի պահանջներին: Մնացած 4-ը (Գրաֆիկա, Արվեստաբանություն, Գեղանկարչություն և Քանդակագործություն), որոնք ակադեմիական են և արվեստի բուհերի համար հիմնարար, բարեփոխումների առումով դեռևս մեկնարկային փուլում են :

Փորձագիտական խումբը գնահատում է, որ բուհում առկա են կրթական ծրագրերն իրականացնելու համար պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր: Պաշտոնների տեղակալման համար առկա է մրցակցային ընտրություն, որը նպաստում է, որ բուհն ունենա առավել մրցունակ և արհեստավարժ աշխատակիցներ: Այն փաստը, որ բուհի դասախոսական անձնակազմի գերակշռող մասը հիմնական աշխատողներ են, էապես բարձրացնում է ՊԴ կազմի կայունությունը և նպաստում կայուն կրթական գործառույթների իրականացմանը: Դրական միտում է նաև այն, որ բուհում իրենց աշխատանքային գործունեությունը շարունակում են բուհի նախկին շրջանավարտները: Բուհում առկա է դասախոսների երիտասարդացման գործընթաց:

Նյութատեխնիկական հագեցվածության և կրթական միջավայրի բարելավումը ԵԳՊԱ-ի ռազմավարական խնդիրներից է: Բուհի կրթական ծրագրերի իրականացումը պահանջում է դրանց յուրահատկություններին համապատասխանող միջավայր, որն իր մեջ ներառում է ժամանակակից սարքավորումներով հագեցված լաբորատորիաներ, արվեստանոցներ, արհեստանոցներ, գրադարան և այլն: ՄԿԾ-երի հիմնական մասը կիրառական բնույթի են և պահանջում են հատուկ արվեստանոցային և լաբորատոր ապահովվածություն, որն ընդհանուր առմամբ առկա է: Կատարված հարցումների հիման վրա ակադեմիան վերազինել է մի շարք լաբորատորիաներ, սակայն ներքին շահակիցները դեռևս բավարարված չեն առկա պայմաններից: Բուհում կատարված հարցումները ցույց են տալիս, որ ուսանողներն ու դասախոսները բավարված չեն նաև առկա գրադարանային ռեսուրսներից: [1]

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ բուհում կա ֆինանսական միջոցների բաշխման ձևավորված մեխանիզմ: Բուհի տարեկան բյուջեում նախատեսված են որոշակի ծախսեր, որոնք ուղղված են բուհի նպատակների իրականացմանը, սակայն ծախսերը մանրամասնեցված չեն ըստ ռազմավարական նպատակների և կրթական ծրագրերի, որն առավել հասցեական կդարձներ կատարվող ֆինանսական ներդրումները: Բուհի ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրը ուսանողական վարձավճարներն են, ինչը ուսանողների թվաքանակի նվազման պայմաններում վտանգում է բուհի ֆինանսական կայունությունը: Բյուջեում աշխատավարձային ֆոնդի մեծ (89%) մասնաբաժինը, կարող է սահմանափակել այլ առանցքային ոլորտներում ներդրումներ կատարելու հնարավորությունը (օր.՝ հետազոտություն, ռեսուրսներ, միջազգայնացում) և թուլացնել ռազմավարական ծրագրի իրականացման արդյունավետությունը:

Բուհում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության բուհի առանձնահատկություններից բխող մեխանիզմներ: Ուսանողների հավաքագրման գործող ընթացակարգերը հստակ են՝ արտահայտելով բուհի առանձնահատկությունները: Ապագա դիմորդների հետ բուհի կողմից կազմակերպված միջոցառումները նպաստում են հավաքագրման աշխատանքներին:

[1] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

Փորձագիտական խումբը դրական է համարում ուսանողական այնպիսի համայնքի առկայությունը բուհում, որը փորձում է ուսումնասիրել ուսանողների կրթական կարիքները և բարձր օղակներում քննարկել դրանք: Ուսանողական համայնքում մեծաթիվ ուսանողների ներգրավվածությունը կնպաստի ուսանողներին առնչվող ավելի լայն շրջանակի խնդիրների բարձրացմանը և կմեծացնի նրանց նախաձեռնողականությունը:

Բուհն ունի մշակված հետազոտական ուղղություններ, սակայն այդ ուղղությունները չեն արտացոլում բուհի բոլոր մասնագիտական կարողությունները, իսկ բուհում հետազոտական ոլորտների և հետաքրքրությունների ընդգրկուն ռազմավարության բացակայությունը թուլացնում է հետազոտական գործունեությունը: Բուհում ստեղծված հետոզոտական կենտրոնի ռեսուրսները բավարար չեն պլանավորված գործունեության ծավալման համար: Թույլ է բուհի և գիտական հաստատությունների միջև հետազոտությանն առնչվող կապը, որը կարող էր արտահայտվել համատեղ գիտական ծրագրեր իրականացնելով: Գիտության և հետազոտության համար ֆինանսական աղբյուրների սակավությունը խոսում է այդ ուղղությամբ բուհի խոցելիության մասին: Չնայած առկա որոշ աշխատանքներին, բակալավրիատում ուսանողական հետազոտական աշխատանքները դեռևս չեն հանդիսանում ուսումնառության բաղկացուցիչ մասը, որը կարող է բացասաբար ազդել կրթական վերջնարդյունքների ձևավորման վրա:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ բուհն ակտիվորեն ներգրավված է միջազգային ծրագրերում, որոնք իրենց ազդեցությունն ունեն բուհի մի շարք գործընթաների վրա /կրթական ծրագրերի վերանայում, ուսանողական ձեռնարկի մշակում, ուսանողական համայնքի ստեղծում և այլն/: Երբ խոսքը վերաբերում է միջազգայնացման և համագործակցության խթանմանը, ԵԳՊԱ-ն քաջատեղյակ է գոյություն ունեցող խնդիրներին /ուսանողների և դասախոսների արտագնա և ներգնա շարժունության ակտիվացում, անգլերեն լեզվի մակարդակի բարձրացում և այլն/: Բուհի, միջազգային ծրագրերում ակտիվ մասնակցությունը, փորձ է ապահովում առաջիկայում բուհի միջազգայնացման նպատակային զարգացման համար: ՄՈՒՀ-ի կազմակերպչական կառուցվածքում գործող արտաքին կապերի բաժինը իր ռեսուրսներով հիմք է ստեղծում միջազգայնացման և արտաքին կապերի հետագա ակտիվացման համար: Միաժամանակ, արտաքին կապերի բաժնի առավել ակտիվ գործունեությունը կնպաստի ուսանողներին և դասախոսներին ներգրավվելու միջազգային տարբեր ծրագրերում, արտերկրում ուսումը շարունակելու և/կամ այլ գործունեություն ծավալելու համար: [2]

Վերջին տարիների ընթացքում բուհի որակի ապահովման համակարգի ներդրումն ու զարգացումը նպաստավոր պայմաններ են ստեղծել որակի մշակույթի ձևավորման համար: Սակայն որակի մշակույթը դեռևս չի տարածվել ամբողջ ակադեմիայում: Բուհի որակի ապահովման կենտրոնի գործունեությունը և մշակված բազմաթիվ կանոնակարգերը ընդհանուր առմամբ հիմք են հանդիսանում որակի ապահովման գործառույթների իրականացման համար, սակայն առկա է մշակված փաստաթղթերի օպտիմալացման և առավել հասցեական դարձնելու խնդիր: Բուհի դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներին ապահովվում է հիմնականում հարցումների և սակավաթիվ միջոցառումների միջոցով: Առավել հասցեական և արդյունավետ գործունեություն ապահովելու նպատակով նրանց ակտիվության աստիճանը դեռևս բարձրացման կարիք ունի:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ.

1. ԵԳՊԱ Ռազմավարական ծրագիրը վերլուծության արդյունքում բարելավվել է և ՌԾ-ում առկա են խնդիրների կատարողականի ցուցիչներ,

[2] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

2. ԵԳՊԱ-ն միջազգային ծրագրերի շրջանակներում ՄԿԾ-ների վերանյման որոշակի փորձ է ձեռք բերել,
3. ԵԳՊԱ-ում գործում է Ուսանողական համայնք, որը նպաստում է ուսանողների կարիքների վերհանմանը,
4. Բուհի ՊԴ կազմում իրենց գործունեությունն են ծավալում հանրապետությունում հայտնի արվեստագետներ,
5. ՄՈՒՀ-ն ունի կրթական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներ,
6. ՄՈՒՀ-ում առկա է հաշվետվողականության համակարգ, որն ապահովում է գործունեության թափանցիկությունը,
7. ՄՈՒՀ-ն ունի միջազգային ծրագրերի մասնակցության փորձ, որը նպաստում է ՄՈՒՀ-ի արտաքին կապերի ամրապնդմանը,
8. ՄՈՒՀ-ում առկա է որակի ներքին ապահովման համակարգ, որը նպաստում է որակի մշակույթի ձևավորմանը:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ.

1. ԵԳՊԱ ՌԾ-ն հիմնված չէ արտաքին միջավայրի հստակ վերլուծության վրա, իսկ խնդիրների կատարողականի ցուցիչները չունեն հիմնավորումներ,
2. ԵԳՊԱ-ի կազմակերպական կառուցվածքը հարմարեցված չէ ռազմավարական նպատակների իրականացմանը, առկա է կառավարչական ռեսուրների օպտիմալ տեղաբաշխման խնդիր,
3. ՄԿԾ-ների վերանայման գործընթացին արտաքին շահակիցներ չեն մասնակցել, իսկ ԵԳՊԱ-ի համար հիմնարար մասնագիտությունների կրթական ծրագրերը դեռևս բարեփոխումների չեն ենթարկվել,
4. Դասախոսների մասնագիտական զարգացման վերապատրաստումները սակավաթիվ են,
5. ԵԳՊԱ հետազոտական կենտրոնը չունի անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներ՝ նպաստելու հետազոտական գործունեության զարգացմանը,
6. ԵԳՊԱ գրադարանը հագեցած չէ արդի գրականությամբ, առկա չէ էլեկտրոնային գրադարան,
7. ՄՈՒՀ-ում մշակվող հաշվետվությունները հիմնականում ունեն տեղեկատվական բնույթ, և քիչ են վերլուծությունները,
8. ՄՈՒՀ-ում օտար լեզուների իմացության մակարդակը ուսանողների և դասախոսների շրջանում բարձր չէ,
9. Գործընթացների մեծ մասը ՄՈՒՀ-ում գտնվում է պլանավորման և իրականացման փուլում, փակված չէ ՊԻԳԲ շրջափուլը:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաքելություն և նպատակներ

1) Հստակեցնել բուհի ռազմավարական խնդիրները՝ դրանք դարձնելով առավել համահունչ բուհի հնարավորություններին, ինչպես նաև ներգրավել արտաքին շահակիցներին ռազմավարական նպատակների իրականացման գործում և ապահովել հետադարձ կապ նրանց հետ:
2) Անհրաժեշտ է սահմանել կատարողականի հիմնավորված ցուցիչներ, որոնց կիրառմամբ հնարավոր կլինի գնահատել, թե արդյոք իրականացվել են ռազմավարական նպատակները:
3) Բարելավել բուհի ռազմավարական ծրագրի իրականացման նպատակով կիրառվող կանոնակարգերը՝ դրանք դարձնելով առավել գործուն:

Կառավարում և վարչարարություն

4) Բարեփոխել բուհի կազմակերպական կառուցվածքը և հարմարեցնել բուհի ռազմավարական նպատակներին:
5) Ապահովել ներքին և արտաքին շահակիցների առավել ակտիվ մասնակցությունը կառավարման գործընթացներում:
6) Մշակել և իրականացնել ԵԳՊԱ կառավարման համակարգի արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ:
7) Բարձրացնել կատարվող հարցումների հավաստիության աստիճանը:

Մասնագիտության կրթական ծրագրեր

8) Մշակել և իրականացնել ՄԿԾ-ների վերանայման ժամանակացույց՝ ներգրավելով ներքին և արտաքին բոլոր շահակիցներին ՄԿԾ-ների հետագա զարգացման գործընթացում:
9) Մեծացնել շրջանավարտների և գործատուների ներգրավվածությունը ՄԿԾ-ների մշակման, վերանայման և ներդրման գործընթացներում:
10) Իրականացնել բենչմարքինգ բոլոր ՄԿԾ-ների համար:
11) ՄԿԾ-ներում արտացոլել ուսումնառության և դասավանդման մեթոդների առանձնահատկությունները ու գնահատման ձևերի կապը վերջնարդյունքների հետ:
12) Մշակել և իրականացնել գրագողության դեմ պայքարի և ակադեմիական ազնվության քաղաքականություն՝ հատուկ արվեստի ոլորտի ՄԿԾ-ների համար:
13) Մշակել դասընթացների կրեդիտների հաշվարկման հիմնավորված մոտեցումներ:

Ուսանողներ

14) Կատարելագործել ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմները և ուսումնասիրել դրանց արդյունավետությունը:
15) Զարգացնել ուսանողների հետազոտական գործունեությունը և ուժեղացնել հետազոտություն-ուսումնառություն կապը:
16) Բարձրացնել կարիերայի կենտրոնի գործառույթների վերաբերյալ տեղեկացվածության աստիճանը ոսանողների առավել լայն շրջանում:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ

18) Մշակել և ներդնել դասախոսների մասնագիտական վերապատրաստումների համակարգ:
19) ՄԿԾ փաթեթներում ներառել դասախոսներին ներկայացվող մասնագիտական պահանջներ:
20) Մշակել մեխանիզմներ՝ խթանելու երիտասարդ դասախոսներով բուհի համալրումը:
21) Գնահատել ուսումնաօժանդակ անձնակազմի կողմից կատարվող աշխատանքի արդյունավետությունը:

Հետազոտություն և զարգացում

22) Մշակել հետազոտական գործունեության ուղղություններ բուհում առկա մասնագիտական ոլորտների համար՝ հաշվի առնելով ամբիոններում կուտակված գիտական փորձը և առկա ռեսուրսները:
23) Բարելավել հետազոտական կենտրոնի գործունեությունը՝ տրամադրելով համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:
24) Խթանել միջազգային մակարդակով հետազոտական գործունեությունը՝ շեշտադրելով համատեղ ծրագրերի իրականացումը:
25) Բակալավրական կրթական ծրագրերում ներդրնել, իսկ մագիստրատուրայում առավել ընդգծել հետազոտական բաղադրիչը:

Ենթակառուցվածք և ռեսուրսներ

26) Բուհի ֆինանսական պլանավորումն ու ռեսուրսների բաշխումն իրականացնել՝ հաշվի առնելով ՌԾ նպատականերն ու խնդիրները, ՄԿԾ-ների պահանջները:

27) Բարելավել գրադարանային ֆոնդը, այն ավելացնելով նոր, հատկապես կրթական ծրագրերին առնչվող առավել թարմ գրականությամբ:
28) Ստեղծել համապատասխան պայմաններ՝ հատուկ կարիքներ ունեցող անձանց համար կրթական միջավայրը հասանելի դարձնելու նպատակով:
29) Ֆինանսական անկախության և կայունության նպատակով ապահովել ֆինանսավորման արտաքին աղբյուրներ և ընդլայնել դրամաշնորհային ծրագրերի քանակը:

Հասարակական պատասխանատվություն

30) Բարելավել բուհի կայքէջը և դարձնել այն առավել ֆունկցիոնալ:
31) Հստակեցնել և զարգացնել հասարակության հետ հետադարձ կապերի մեխանիզմները:
32) Մշակել և ներդնել հասարակությանը մատուցվող ծառայությունների կայուն համակարգ:

Արտաքին կապեր և միջազգայնացում

33) Ներքին շահակիցների շրջանում խթանել օտար լեզուների իմացության մակարդակը՝ արտաքին համագործակցության և օտարալեզու կրթական ծրագրերի ներդրման նպատակներով:
34) Հատկացնել համապատասխան ռեսուրսներ դասախոսների և ուսանողների արտագնա շարժունությունն ապահովելու նպատակով:
35) Ներգրավել միջազգային հրավիրյալ դասախոսներ՝ կարճաժամկետ ծրագրերով:
36) Պարբերաբար կազմակերպել միջոցառումներ՝ միջազգային ուսանողների ներգրավվման նպատակով:

Որակի ներքին ապահովում

38) Ապահովել ՈԱ անձնակազմի մասնագիտական զարգացման շարունակականությունը և ներգրավել ներքին շահակիցներ՝ ակտիվացնելու որակի ապահովման գործընթացները ֆակուլտետների և ամբիոնների մակարդակներում:
39) Ներդնել ՈԱ գործընթացներում արտաքին շահակիցների մասնակցությունը խրախուսող քաղաքականություն, ընթացակարգեր և մեխանիզմներ:
40) Մշակել ՈԱ համակարգի մշտադիտարկման, գնահատման և բարելավման մեխանիզմներ:

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

ԵԳՊԱ-ի՝ եվրոպական բարձրագույն կրթական տարածք (ԵԲԿՏ) ինտեգրվելու հավակնության վերաբերյալ ներկայացվում են հետևյալ դիտարկումներն ու խորհրդատվությունը:

Դիտարկումներ

Որակի սահմանման չափանիշների վերաբերյալ

ԵԳՊԱ որակի սահմանման գործընկերային գնահատման հիմք է հանդիսացել մասավորապես վերջինինս 2017-2021թթ. ռազմավարական ծրագիրը: Վերջինս նկարագրում է ռազմավարական վեց նպատակները և յուրաքանչյուր նպատակի համար սահմանում կատարողականի ցուցիչներ: Այդուհանդերձ, ԵԳՊԱ-ն իր ռազմավարական նպատակներն ըստ առանձնահատկության չի դիրքորոշում: Վերոգրյալից զատ, ռազմավարական պլանը ոչ մի բացատրություն չի ներառում առ այն, թե ինչու են հենց այս կամ այն ցուցիչներն ընտրվել, և թե կոնկրետ ինչ միջոցներ են իրականացվելու ակնկալվող նպատակներին հասնելու համար: Գրեթե բոլոր ամբիոնների[3] աշխատանքային պլանները միանման են: Առկա չէ պլանների

[3] Ամբիոնը պրոֆեսորադասախոսական անձնակազմի համահավաքն է, որը պատասխանատու է այս կամ այն ՄԿԾ-ի համար:

իրականացման սահմանված գործընթաց: Ավելին, համապատասխան ոչ բոլոր շահակիցներն են ներգրավված գործընթացում:

Որակի ապահովման կենտրոնը (ՈԱԿ) պարբերաբար հարցումներ է իրականացնում՝ գնահատելու ՄԿԾների որակը: Ուսանողների հետադարձ կապը սարքավորումների հագեցվածության վերաբերյալ հանգեցրեց նրան, որ բարեփոխումներ իրականացվեցին նորաձևության դիզայնի, համակարգչային գրաֆիկայի, դիզայնի և կիրառական արվեստների լաբորատորիաներում: ՈԱ կենտրոնը կարևոր օղակ է կրթության որակն ապահովելու դիտանկյունից, այդուհանդերձ, դեռ ոչ բոլոր շահակիցներն են իրենց աջակցությունը ցուցաբերում վերոգրյալ կենտրոնին: ԵԳՊԱ-ում ուսումնառության և դասավանդման ավանդական մեթոդների կիրառումը խոչընդոտել է որակի մշակույթի հիմնումը:

ԵԳՊԱ-ի ռազմավարական նպատակների շարքում է վերջինիս հետազոտական գործունեության ընդլայնումը, բայց նախ և առաջ ԵԳՊԱ-ն պետք է սահմանի, թե գեղարվեստի ոլորտում ինչպիսի հետազոտություն է ծավալելու, և ինչ է ենթադրում արվեստի ոլորտում իրականացվող հետազոտությունը՝ այլ ԲՈՒՀ-երում իրականացվող հետազոտությունների համեմատ:

Ռազմավարական պլանում մատնանշված ռազմավարական նպատակները և դրանց կատարողականի ցուցիչները միշտ չէ, որ համահունչ են: ԵԳՊԱ-ն պետք է սահմանի կատարողականի այնպիսի ցուցիչներ, որոնք կբացահայտեն, թե արդյոք ռազմավարական նպատակներն իրականացվել են, թե՝ ոչ: Անհրաժեշտ է նաև բացատրել, թե ինչպես են սահմանվել ներկայիս արժեքները և նպատակները, ինչպես նաև այն, թե որոնք են ԵԳՊԱ առաջնահերթությունները: 2017-2021 ռազմավարական պլանում զետեղված ռազմավարական նպատակները չափազանց ընդհանրական են և վարչական բաժանմունքների, յուրաքանչյուր ամբիոնի և ընդհանուր առմամբ ԵԳՊԱ համար կիրառելի աշխատանքային պլանների չեն վերածվում:

Կրթական ծրագրերի/դասընթացների/վերապատրաստումների չափանիշների վերաբերյալ

ԵԳՊԱ ծրագրերը բավական լավ են մշակված, և թե՛ ուսանողները, թե՛ շրջանավարտներն ու գործատուները գոհ են կրթության որակից և ԵԳՊԱ շրջանավարտների որակավորումների պրոֆիլից: Երեք ՄԿԾ արդեն իսկ անցել է արտաքին գնահատում՝ ինչպես տեղական, այնպես էլ՝ եվրոպական փորձագետների կողմից: Այնուամենայնիվ, առկա չէ մնացած ՄԿԾների վերանայման ժամանակացույց: Վերոգրյալից զատ՝ գնահատման արդյունքները թափանցիկ չեն:

ՄԿԾ-ների զարգացմանն ուղղված քայլերի նախաձեռնումը գալիս է ներքին շահակիցներից, մինչդեռ շրջանավարտներն ու գործատուները կարող են ավելի արդյունավետ ներգրավվածություն ունենալ համապատասխան գործընթացներում:

Երբ խոսքը վերաբերում է միջազգայնացման և համագործակցության խթանմանը, ԵԳՊԱ-ն քաջատեղյակ է գոյություն ունեցող խնդիրներին: Դասախոսների և ուսանողների անգլերենի իմացության մակարդակը ցածր է. ավելին, ուսանողների մեծամասնությունը ֆինանսական դիտանկյունից վճարունակ չէ՝ այլ երկրում կրթությունը շարունակելու համար: ԵԳՊԱ-ն արդեն իսկ առաջին քայլերն է ձեռնարկել վերոգրյալ խնդիրների լուծման ուղղությամբ, այդուհանդերձ, դեռ առկա են բարելավման շատ տիրույթներ:

Գնահատելի է քննական համակարգն ընդհանուր առմամբ և բողոքարկման համակարգը՝ մասնավորապես: Այդուհանդերձ, ավարտական աշխատանքների ներկայացումը միշտ չէ, որ իրականացվում է ԵԳՊԱ կանոնակարգերի համաձայն:

ԵԳՊԱ-ն ուսանողներին աջակցելու բավարար ռեսուրսներ ունի: Ավելին, ուսանողների և դասախոսների միջև առկա է համագործակցության անկաշկանդ մթնոլորտ:

«Ռեսուրսների կառավարում» չափորոշչի վերաբերյալ

Ռեսուրսների կառավարմանն անդրադառնալով՝ հարկ է նշել, որ փորձագետների կարծիքով այս տիրույթում առկա է բարելավման անհրաժեշտություն: Գնահատելի է այն, որ ԵԳՊԱ-ն բարեկարգել է մի շարք աշխատասենյակներ և որ ուսանողները գոհ են իրենց

ընձեռված հնարավորություններից, աշխատանքային պայմաններից, ինչպես նաև համագործակցային, անկաշկանդ մթնոլորտից: ԵԳՊԱ-ն ջանում է ականջալուր լինել աշխատաշուկայի պահանջներին և աշխատանքներ է ծավալում ուսանողներին տեխնիկական նոր սարքավորումների և մեթոդների հետ ծանոթացնելու ուղղությամբ: Այդուհանդերձ, ցայսօր դեռ մի քանի դասախոսներ են արվեստի դասավանդման ժամանակակից մոտեցումներ որդեգրել: Ընդհանուր առմամբ դասախոսական անձնակազմի՝ դասավանդման հմտությունների շարունակական զարգացման մոտիվացիան ցածր է:

Հետազոտական գործունեության բարելավման ռազմավարական նպատակին հասնելու համար՝ ԵԳՊԱ նախ պետք է սահմանի, թե ինչ ասել է *հետազոտություն* արվեստի ակադեմիայի համար, և միայն հետո ձեռնամուխ լինի դասախոսների հետազոտական գործունեության խթանման պլանի մշակմանը, ինչպես նաև այդ գործընթացում ուսանողների ներգրավվմանը: Ավելին, այս պարագայում հետազոտական կենտրոնին հասանելիք թե՛ ֆինանսական և թե՛ մարդկային ռեսուրսները, հավանաբար, հարստացման անհրաժեշտություն կունենան:

«Արտաքին հարաբերությունների ընդլայնման և շարժունության խթանման» ռազմավարական նպատակի իրականացումը խաթարված է կրթաթոշակներին հատկացվող ֆինանսական ռեսուրսների բացակայությամբ, ինչպես նաև անգլերենի տիրապետման ոչ բավարարար մակարդակով: ԵԳՊԱ-ն դեռ չունի միջազգայնացման համընդհանուր պլան:

Բացակայում են նաև առկա սահմանափակ ֆինանսական ֆոնդերի լույսի ներքո առաջնահերթությունների թափանցիկ ցանկը, ինչպես նաև շահերի բախման պարագայում իրականացվելիք գործողությունների համապարփակ քաղաքականությունը: Այուհանդերձ, դասավանդման համար նախատեսված ենթակառուցվածքներն ընդհանուր առմամաբ, ինչպես նաև ուսանողների համար նախատեսված աշխատասենյակները մասնավորապես թե՛ քանակապես, թե՛ որակապես բավարար են հասնելու յուրաքանչյուր դասընթացի շրջանակներում նախանշված վերջնարդյունքներին:

Մարդկային ռեսուրսների զարգացման դիտանկյունից ԵԳՊԱ դեռ շատ անելիքներ ունի: Չնայած այն հանգամանքին, որ ԵԳՊԱ-ն մեծ կարևորություն է տալիս ՄՌ զարգացմանն ուղղված որակի ապահովման կառուցակարգերի և գործիքակազմի զարգացմանն ու կիրառմանը՝ համապատասխան քայլեր դեռ գործի չեն դրվել և դասավանդող անձնակազմի միայն մի քանի անդամներ են վերապատրաստումներ անցել այս ոլորտներում:

ԵԳՊԱ-ն արդեն իսկ բարելավել է մի քանի աշխատասենյակ, բայց տեխնիկական ենթակառուցվածքը, ինչպես նաև սարքավորումները դեռ հետագա բարելավման կարիք ունեն: Նույնը վերաբերում է նաև գրադարանին: Վերոգրյալն ընդհանրացնելով՝ կարող են փաստել, որ ենթակառուցվածքի վերազինումը և դասավանդող անձնակազմի թարմացումը ներկայումս կարևորագույն ոլորտներն են ԵԳՊԱ-ի համար: Կերպարվեստի ավանդական ոլորտներում ժամանակակից տեխնիկաների և մեթոդների ներմուծումը ևս խնդրահարույց տիրույթ է, որին պետք է անդրադարձ կատարել:

«Թափանցիկություն և փաստաթղթավորում» չափորոշչի վերաբերյալ

Փորձագիտական խումբը գնահատում է ԵԳՊԱ-ի թափանցիկ մոտեցումը փաստաթղթերի կառավարմանը, ինչպես նաև բաց և համագործակցային մոտեցումն ընդհանուր առմամբ: Ուսանողները լավ տեղեկացված են գործող կանոնակարգերին: Համապատասխան փաստաթղթերը հրապարակվում են ԵԳՊԱ-ի կայքէջում, որը հնարավորություն է ընձեռում որպեսզի բոլոր շահակիցները կարողանան մուտք գործել և տեղեկացված լինեն ՄԿԾների կառուցվածքին, բովանդակությանը, ինչպես նաև նախանշված վերջնարդյունքներին: Համապատասխան բոլոր կանոնակարգերն ու որոշումները տեղադրված են ԵԳՊԱ կայքէջում և ուստի հասանելի են բոլոր շահակիցներին: Որպես արդյունք, ուսանողները և դասախոսները լավ տեղեկացված են գոյություն ունեցող որոշումներին և կանոնակարգերին, փաստաթղթերը հասկանալի են բոլոր շահակիցներին:

Չնայած տարբեր բաժիններում առկա են կառավարման էլեկտրոնային համակարգեր՝ ինչպես օրինակ հաշվապահական գործընթացների համակարգեր, ուսանողների առաջընթացի, ինչպես նաև անձնակազմի տվյալների բազա, ներկայիս համակարգերը մեկը մյուսի հետ կապակցված չեն:

ԵԳՊԱ-ի կայքէջը ֆունկցիոնալ է և համապատասխան շահակիցները կարող են գտնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը և տեղեկատվությունը:

Խորհրդատվություններ

1. ԵԳՊԱ-ն պետք է սահմանի, թե գեղարվեստի ոլորտում ինչ տեսակ հետազոտական աշխատանք է իրականացնելու և ինչ է ենթադրում արվեստի ոլորտում իրականացվող հետազոտությունը:
2. Անհրաժեշտ է սահմանել կատարողականի ցուցիչներ, որոնց կիրառմամբ հնարավոր կլինի գնահատել, թե արդյոք իրականացվել են ռազմավարական նպատակները: Վերոգրյալից զատ, անհրաժեշտ է նաև բացատրել, թե ինչու են ընտրվել այս կամ այն ցուցիչները:
3. Տարեկան աշխատանքային պլանները պետք է հաշվի առնեն տարբեր ամբիոնների և ՄԿԾ-ների կարիքներն ու նպատակները:
4. ԵԳՊԱ պետք է լիովին ներդնի և երաշխավորի որակի ապահովման ընդհանուր չափանիշի արդունավետությունը և որակի կառավարման համակարգում ներառի համապատասխան բոլոր շահակիցներին:
5. ԵԳՊԱ վարչական անձնակազմը պետք է առավել աջակցություն ցուցաբերի ՈԱ կենտրոնին: Անհրաժեշտ է նաև քայլեր ձեռնարկել, որպեսզի որակի ապահովման գործիքակազմն առավել լայն ընդունելություն ստանա:
6. Պետք է մշակվի փորձագիտական գնահատում չանցած մնացած ՄԿԾների վերանայման պլան:
7. Ներքին և արտաքին բոլոր շահակիցները պետք է համակարգայնորեն ներգրավված լինեն ՄԿԾների հետագա զարգացման գործընթացում:
8. Շրջանավարտները և գործատուները պետք է առավել ներգրավված լինեն ՄԿԾների ներդրման գործընթացներում, ուսանողները պետք է հնարավորություն ունենան արտերկրում ուսանել, ինչպես նաև պետք է ծանոթ լինեն գեղարվեստի ոլորտում կիրառվող ժամանակակից մոտեցումներին, նյութերին և տեխնիկաներին:
9. ԵԳՊԱ-ն պետք է լրջորեն զբաղվի դասախոսների և ուսանողների շարժունությունը սահմանափակող խնդիրների լուծմամբ: Անգլերենի իմացության մակարդակը բավարար չէ և պետք է բարելավվի: Պետք է առկա լինեն փոխանակման ծրագրերում մասնակցող ուսանողներին հատկացվող կրթաթոշակների ձեռք բերման հնարավորություններ:
10. Քննական ձևաչափերը պետք է ավելի բազմազան լինեն: Ավելին, ավարտական գնահատումը պետք է իրականացվի ԵԳՊԱ կանոնակարգերին համաձայն:
11. Առաջադիմության/ձեռքբերումների ճանաչումը պետք է առավել հիմնված լինի կրթական վերջնարդյունքների վրա, քան ստացված կրեդիտների: Սա է ճանաչման ուսանողակենտրոն և վերջնարդյունքահեն մոտեցման գրավականը:
12. ԵԳՊԱ–ն պետք է իր ուսանողներին ավելի լավ տեղեկացնի արտերկրում ուսանելու համար տրամադրվող կրթաթոշակ ստանալու հնարավորությունների մասին և պետք է փորձի ուսանողների կողմից պահանջարկ վայելող միջազգային համագործակցություններ հաստատել:
13. ԵԳՊԱ–ն պետք է փորձի հավելյալ արտաքին ֆինանսավորում ձեռք բերել և շարունակի բարելավել աշխատասենյակները: Անհրաժեշտ է թվայնացնել գրադարանը և ապահովել ժամանակակից գրականության, ինչպես նաև տվյալների միջազգային բազաների հասանելիությունը ուսանողների համար:

14. Պետք է սահմանվեն տեխնիկական սարքավորումների թարմացման առաջնահերթությունները: Պետք է ապահովվի նաև դրանց թափանցիկությունը, ինչպես նաև սահմանվի համապատասխան ընթացակարգ շահերի/հետաքրքրությունների հնարավոր բախումները հավասարակշռելու համար:
15. Նոր որակյալ կադրերի աշխատանքի ընդունումը պետք է առաջնահերթություն լինի ԵԳՊԱ–ի համար և վերջինս պետք է համապատասխան պլան մշակի առ այն, թե ինչպես կարել է հասնել այս նպատակին:
16. ԵԳՊԱ–ն պետք է իր անձնակազմին մոտիվացնի օգտվել զարգացման հնարավորություններից և համապատասխան պլան մշակի առ այն, թե ինչպես վերապատրաստումներում և դասընթացներում ներգրավվել բոլոր շահակիցներին:
17. ԵԳՊԱ–ն պետք է սահմանի *հետազոտություն* ասվածը գեղարվեստի ակադեմիայի համար և տարանջատի, թե ինչ տիպի հետազոտություն է հնարավոր իրականացնել: Հետազոտությանն ուղղված բյուջեն պետք է լինի թափանցիկ և բավարար լինի հետազոտական գործունեության խթանման համար: Անհրաժեշտ է մշակել հետազոտության և դասավանդման համակցման կոնցեպտը:
18. ԵԳՊԱ–ն պետք է փորձի սահմանել ապագա մարտահրավերները՝ ուսուցման և դասավանդման կառավարման արդյունավետ կազմակերպման և իրագործման համար:
19. Թե՛ դասավանդող անձնակազմի, թե՛ ուսանողներին շրջանում պետք է հարցում իրականացվի՝ պարզելու, թե արդյոք գոյություն ունեցող փաստաթղթերն ունեն հետագա բարելավման կարիք:
20. ԵԳՊԱ-ն պետք է վերանայի իր կայքէջը և թարմացնի էլեկտրոնային նյութերը:

17 նոյեմբեր 2017

_____

Վարդան Սարգսյան
Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրություն

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ինքնավերլուծության և որակի ապահովման գործընթացների արտաքին գնահատումն իրականացվել է փորձագիտական խմբի հետևյալ անդամների կողմից[4]՝

- **Վարդան Ալբերտի Սարգսյան** - Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Տնտեսական Ինֆորմատիկայի և Տեղեկատվական Համակարգերի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր
- **Լիլիթ Հենրիկի Ֆլջյան** – Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստների ամբիոնի ասիստենտ՝ մանկավարժական գիտությունների թեկնածու
- **Յորգ Լանգմուս** –<<ASIIN>> Ինժիներական, համակարգչային և բնական գիտությունների և մաթամատիկայի ոլորտում հավատարմագրում իրականացնող կազմակերպության անդամ է: Բեռլինի՝ Բեութի տեխնիկական համալսարանի դասախոս
- **Հերբերտ Յոհան Լոռենց Գրյուներ** –Սուրբ Գալենի համալսարանի՝ մենեջերների համար նախատեսված ուսումնական ծրագրերի դասընթացների տնօրեն, համալսարանի դասախոս
- **Բրուվայլեր Հանս-Քրիստիան** – Գերմանիայի Զվիկաու քաղաքի կիրառական գիտությունների արևմտյան սաքսոնական համալսարանի դասախոս
- **Էրիկ Վարդանյան** – Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ճարտարապետություն և ինժիներիայի բաժնի ուսանող

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել են ՈԱԱԿ-ի Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի ավագ մասնագետ Վարդուհի Գյուլազյանը:

Գերմանական կողմից աշխատանքները համակարգել է <<ԱԶՁԻՆ>>՝ Ինժիներական, համակարգչային և բնական գիտությունների և մաթամատիկայի ոլորտում հավատարմագրում իրականացնող կազմակերպության մասնագետ Արնոլդ Ղայները:

Թարգմանությունը կատարել է Հայաստանի Ֆրանսիական համալսարանի Օտար լեզուների ամբիոնի վարիչ Զարուհի Սողոմոնյանը:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ակադեմիայի հետ և նշանակվել ՈԱԱԿ-ի տնօրենի որոշմամբ:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում թարգմանիչն ու համակարգողներն ստորագրել են անկախության և գաղտնիության համաձայնագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ԵԳՊԱ-ն դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 1. Փորձագիտական խմբի անդամների ինքնակենսագրականներ

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը և հաստատության կողմից լրացված ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը:

Դիմում-հայտի ընդման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի և ՄՈՒՀ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն և անգլերեն լեզուներով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

Ակադեմիաի ինքնավերլուծությունն իրականացրել է հատուկ այդ նպատակով ՄՈՒՀ-ի ռեկտորի հրամանով ձևավորված խումբը:

Նախապատրաստական փուլ

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Այնուհետև քարտուղարությունն ինքնավերլուծությունն ուղարկել է փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է Ակադեմիաի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով: Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել է հինգ վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. ՀՀ հավատարմագրման կարգը, չափանիշները և չափորոշիչները,
2. Փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
3. Նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները,
4. Փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրության մեթոդաբանությունը,
5. Հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով Ակադեմիաի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը:

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[5]: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, այցելություններ հաստատության ստորաբաժանումներ և այլն:

Նախապատրաստական այց

Նախապատրաստական այցը տեղի է ունեցել փորձագիտական այցից մեկ շաբաթ առաջ փորձագիտական խմբի ղեկավարի, ՈԱԱԿ-ի Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի ղեկավարի և փորձագիտական գնահատման գործընթացի համակարգողի մասնակցությամբ: Նախապատրաստական այցի ընթացքում Ակադեմիաի հետ համաձայնեցվել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ներկայացվել է

[5] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԵԳՊԱ ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խմբի այցերի ժամանակացույց

ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Դիտարկվել են ֆոկուս խմբային քննարկումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված սենյակները, հստակեցվել են դրանց կահավորման ու տեխնիկական միջոցներով հագեցման խնդիրները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2017թ. մայիսի 29-ից հունիսի 1-ը ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցի համաձայն փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետների հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերն ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Այցին ներկա են գտնվել փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը և թարգմանիչը:

Փորձագիտական այցն սկսվել և ավարտվել է Ակադեմիաի ռեկտորի հետ հանդիպումով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների դասախոս և ուսանող մասնակիցները, դեկանները, ամբիոնի վարիչները, գործատուներն ու շրջանավարտներն ընտրվել են պատահականության սկզբունքով նախօրոք տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները: Այցի ընթացքում փորձագիտական խումբը փաստաթղթերի ուսումնասիրություն[6], ռեսուրսների դիտարկում[7] և ֆոկուս խմբային հանդիպումներ է իրականացրել Ակադեմիաի տարբեր ստորաբաժանումներում:

Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքներ, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների և ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում, որով նախատեսվում է գնահատման երկաստիճան սանդղակ՝ ***անբավարար և բավարար:*** Ընդ որում այդ սանդղակով Ակադեմիաի ինքնավերլուծության գնահատումն իրականացվել է ըստ յուրաքանչյուր չափանիշի համար սահմանված առանձին չափորոշիչների, իսկ փորձագիտական զեկույցն՝ ըստ չափանիշների:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը նախնական գնահատումն իրականացրել է Ակադեմիաի ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության և փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա խմբի ղեկավարը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Փորձագիտական խումբը վերջնականացրել է զեկույցը՝ հիմնվելով ՄՈՒՀ-ի կողմից ստացված դիտողությունների վրա: Միջազգային փորձագետները իրենց համաձայնությունն են տվել

[6]ՀԱՎԵԼՎԱԾ 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ

[7] ՀԱՎԵԼՎԱԾ 4. Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված ռեսուրսներ

փորձագիտական զեկույցին: Գործընկերային գնահատման կարծիքը ամբողջությամբ է ներառվել զեկույցի տեքստում:
Նախնական զեկույցը ներկայացվել է Ակադեմիա 21.07.2017-ին:

Զեկույցի վերաբերյալ իր դիտողություններն ու մեկնաբանություններն Ակադեմիան ուղարկել է ՈԱԱԿ 08.08.2017թ.: Բուհն իր դիտողություններն ու մեկնաբանությունները ներկայացրել է հայերեն լեզով, որոնք տրամադրվել են տեղացի փորձագետներին: 2017թ. հոկտեմբերի 23-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է բուհի և փորձագիտական խմբի ներկայացուցիչների հանդիպում, որի ժամանակ էլ ներկայացվել է խմբի պատասխանը: Հաշվի առնելով բուհի մեկնաբանությունները՝ փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 16.11.2017թ.:

17 նոյեմբեր 2017թ.

_____

Վարդուհի Գյուլազյան

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ – Երևանի գեղարվեստի պետական ինստիտուտը հիմնադրվել է 1945 թվականին և հիմնադրման պահին ունեցել է երկու մասնագիտություններ՝ գեղանկարչություն և քանդակագործություն, որոնցով ուսումնառում էին 22 ուսանող: 1953 թվականին միավորվում են Թատերական և Գեղարվեստի ինստիտուտները և ստեղծվում է Գեղարվեստա-թատերական ինստիտուտը, որը 1994 թվականին կրկին բաժանվում է 2 առանձին բուհերի, իսկ 2000 թվականին ՀՀ կառավարության որոշմամբ բուհը վերանվանվում է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա (ԵԳՊԱ):

Այսօր, Երևանի գեղարվեստի պետական ակադեմայում, ինչպես նաև Գյումրու և Դիլիջանի մասնաճյուղերում, սովորում է շուրջ 900 ուսանող: ԵԳՊԱ-ն կրթական ծառայություններ է առաջարկում կերպարվեստի, դիզայնի և կիրառական արվեստի ոլորտների 17 մասնագիտության կրթական ծրագրերով, բարձրագույն կրթության բոլոր երեք մակարդակներում: ԵԳՊԱ-ում դասավանդում են հանրապետության արվեստի առաջատար գործիչները, ովքեր ունեն նաև միջազգային ճանաչում՝ արվեստի և մշակույթի վաստակավոր գործիչներ, ժողովրդական և վաստակավոր նկարիչներ, միջազգային մրցույթների հաղթողներ, պետական մրցանակների դափնեկիրներ՝ 3 ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 37 պրոֆեսոր, 25 դոցենտ, 35 ավագ դասախոս, 36 դասախոս:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ – ԵԳՊԱ-ում գործում է երկու ֆակուլտետ, որոնք իրականացնում են 8 բակալավրական և 8 մագիստրոսական (Դիզայն, Համակարգչային գրաֆիկա, Հագուստի մոդելավորում, Կիրառական արվեստ, Գրաֆիկա, Արվեստաբանություն, Գեղանկարչություն և Քանդակագործություն), ինչպես նաև հետբուհական կրթական ծրագիր (Կերպարվեստ, դիզայն, դեկորատիվ և կիրառական արվեստ): 2013թ.-ից վերանայվել են 4 բակալավրական և 4 մագիստրոսական ծրագիր (Դիզայն, Համակարգչային գրաֆիկա, Հագուստի մոդելավորում, Կիրառական արվեստ), ինչպես նաև՝ վերազինվել համապատասխան լաբորատորիաները: ԵԳՊԱ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերը բխում են և համահունչ են բուհի առաքելությանը, սահմանված են՝ ըստ ուսումնառության վերջնարդյունքների: Վերանայված 4 ՄԿԾ (բակալավր և մագիստրատուրա) համադրելի է ՈԱՇ-ի հետ, և հիմք է մյուս ՄԿԾ-երի հետագա վերանայման և համադրելիության ապահովման համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ – ԵԳՊԱ-ն հիմնականում ստեղծագործական ուղղվածություն ունի և, ի տարբերություն դասական համալսարանների, ակադեմիայում իրականացվող հետազոտությունները գիտական բնույթ հաճախ չեն կրում: ԵԳՊԱ-ի հետազոտությունները հիմնականում ստեղծագործական են և իրենց ոլորտային առանձնահատկություններն ունեն: ԵԳՊԱ-ի հետազոտական ոլորտի առանձնահատկություններն են.

- **Գործնական-կիրառական հետազոտություն**. Հետազոտության այս տեսակը վերաբերում է ստեղծագործական ուղղություններին՝ գեղանկար, քանդակ, գրաֆիկա, դիզայն և դեկորատիվ կիրառական արվեստ: Այս ոլորտներում Հետազոտության նպատակն է նյութերի և գործիքների ճանաչողության խորացումը, մասնագիտական վարպետության հղկումը, գեղարվեստական միջոցների յուրացումն ու զարգացումը, ստեղծագործական երևակայության խթանումը և այս ամբողջի ուսումնասիրությունը գեղարվեստական գործընթացի համատեքստում:
- **Գիտական-տեսական հետազոտություն**. Հետազոտության այս տեսակը հիմնականում վերաբերում է արվեստագիտության և հումանիտար գիտությունների ամբիոնին և ներառում է արվեստի ու արվեստաբանության պատմության ուսումնասիրությունը:

ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ – ԵԳՊԱ-ն մշակել է միջազգայնացման ռազմավարություն, որը անդրադառնում է հաստատության գործունեության կարևորագույն ոլորտների զարգացմանը, մասնավորապես՝ արտաքին կապերի բաժնի գործունեության բարելավմանը, արտաքին կապերի զարգացմանը, ուսանողների և դասախոսների շարժունության և կրթական ծրագրերի միջազգայնացման խթանմանը:

ԵԳՊԱ-ն սահմանված նպատակներին հասնելու համար, կիրառում է տարբեր միջոցներ՝ դիմում է դրամաշնորհային ծրագրերի, կազմակերպում է վերապատրաստումներ անձնակազմի կարողությունների զարգացման համար իրականացնում է տարբեր մակարդակներում միջազգայնացմանը նպաստող կարգերի և ընթացակարգերի մշակում և բարելավում, պլանավորում, մշտադիտարկում և բարելավում է ստորաբաժանումների տարեկան գործունեությունը՝ ռազմավարական նպատակներին համահունչ, կազմակերպում է մշակութային միջոցառումներ՝ ներքին և արտաքին շահակիցների ներգրավմամբ:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ – ԵԳՊԱ-ի որակի քաղաքականությունը արտացոլվում է մի շարք փաստաթղթերում, որոնք հաջողությամբ համակարգում են ընթացիկ գործընթացները.

- ԵԳՊԱ ստորաբաժանումների տարեկան գործունեության պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման կարգ,
- Որակի ապահովման ձեռնարկ,
- ՄԿԾ-ների մշակման և վերանայման ձեռնարկ,
- ԵԳՊԱ ներքին կարգապահական կանոնակարգ և այլն:

ԵԳՊԱ-ն ունի ՈԱ ձեռնարկում ամրագրված և ՌԾ-ում արտացոլված ՈԱ քաղաքականություն: Մշակված է ՈԱ գործիքակազմ, որը թույլ է տալիս գնահատել գործընթացների արդյունավետությունը: ԵԳՊԱ ՈԱ քաղաքականությունը և գործիքակազմը պարբերաբար վերանայվում և լրամշակվում են:

Փորձագիտական խումբը, գնահատում կատարելիս, առաջնորդվել է «համապատասխանություն նպատակներին» սկզբունքով և վերոնշյալ տեղեկատվությունը դիտարկել է որպես ՄՈՒՀ-ի հիմնական հավակնություններ և նպատակներ:

ՉԱՓԱՆԻՇ I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Մասնագիտական ուսումնական հաստատության վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

ՓԱՍՏԵՐ

1.1. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

ԵԳՊԱ-ի գործունեությունը հիմնված է բուհի կանոնադրության և ռազմավարական ծրագրի վրա (ՌԾ): Բուհի առաքելությունը, նպատակներն ու խնդիրները սահմանված են հնգամյան ռազմավարական ծրագրում: Բուհը իր առաքելությունն է համարում՝

- *Տրամադրել բարձրագույն կրթություն՝ իրականացնելով բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրեր արվեստի տեսության, կերպարվեստի, դեկորատիվ կիրառական արվեստի, դիզայնի և ճարտարապետության ոլորտներում՝ ակադեմիական և արդի մոտեցումների կիրառման, ստեղծագործական և կրթական գործընթացները հասարակական կարիքներին համապատասխանեցման միջոցով:*
- *Նպաստել ազգային մշակույթի և տնտեսության զարգացմանը՝ պատրաստելով ազգային ու միջազգային մակարդակներում մրցունակ և բարձր որակավորում ունեցող մասնագետներ, ինչպես նաև հարատև կրթությանը պատրաստ քաղաքացիներ:*
- *Զարգացնել արվեստի հետազոտությունը՝ նպաստելով գիտական մտքի և ազգային մշակույթի տարածմանը:*
- *Ազգային արժեքների ձևավորմամբ նպաստել հասարակության համախմբմանը և գեղագիտական ճաշակի բարձրացմանը:*

Բուհը սահմանել է հետևյալ երեք ռազմավարական ուղղությունները՝

- *Ուսումնառություն և դասավանդում*
- *Հետազոտություն և զարգացում*
- *Ծառայություն հասարակությանը*

Գնահատվել է 2012-2016 թվականների ՌԾ-ի թերի կողմերը և 2017-2021թթ. ռազմավարական ծրագրում սահմանավել են բուհի տեսլականը, առաքելությունը, արժեքները, ռազմավարական ուղղությունները, նպատակները և խնդիրները, խնդիրների իրականացման մոտեցումները և յուրաքանչյուր նպատակի կատարողականի ցուցիչները, ինչպես նաև խնդիրների իրականացման համար նախատեսված գործողությունները, դրանց հնարավոր խոչընդոտները, պատասխանատուները, կատարման ժամկետները և հաջողության ցուցիչները:

Բուհի առաքելության և ՈԱՇ-ի համահունչության ապահովման տեսանկյունից, մշակվել է «Մասնագիտության կրթական ծրագրերի և ՀՀ ՈԱՇ-ի միջև համադրելիության ապահովման ուղեցույց»:

1.2. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Բուհի արտաքին և ներքին շահակիցների կարիքների վերհանման համար իրականացվում են մի շարք հարցումներ:

Մշակվել է «ԵԳՊԱ ռազմավարական ծրագրի նախագծման և վերանայման ուղեցույց»-ը: Ուղեցույցում արտացոլվում են ԵԳՊԱ-ում ռազմավարական պլանավորման սկզբունքները, մոտեցումները, ինչպես նաև ընթացակարգը և շահակիցների ներգրավման ձևերը: Ուղեցույցում նշված են շահակիցների ներգրավման եղանակներ, սակայն փորձագիտական

այցերը ցույց տվեցին, որ արտաքին շահակիցները ներգրավված չեն եղել բուհի առաքելության, նպատակների և խնդիրների մշակման մեջ:

Միաժամանակ, փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ արտաքին շահակիցները շահագրգռված են մասնակցություն ունենալ բուհի գործունեությանը:

1.3. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների՝ գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Բուհի առաքելության ու նպատակների իրականացման ընթացքը գնահատելու նպատակով կիրառվում է ստորաբաժանումների (ուսումնամեթոդական, ֆակուլտետներ, ամբիոններ և այլն) հաշվետվությունների համակարգը: Հատկանշական է ռազմավարական ծրագրի գնահատման և բարելավման փորձը, որն իրականացվել է հարցումների հիման վրա: Ստորաբաժանումների տարեկան պլանները կազմվում են ռազմավարական ծրագրի ժամանակացույցին համապատասխան՝ ըստ սահմանված ձևաչափի: Գործունեության մասին հաշվետվողականությունն իրականացվում է եռամսյակային և տարեկան հաշվետվությունների միջոցով:

ՌԾ-ում առկա են յուրաքանչյուր ռազմավարական խնդրի համար կատարողականի ցուցիչներ: Փորձագիտական խումբը փաստում է, որ այդ ցուցիչները և դրանց պլանավորված արժեքները վերլուծված և հիմնավորված չեն:

Հաշվետվությունները հիմնականում արձանագրում են կատարված աշխատանքները, խնդիրները և փաստերը: Նկարագրված չեն այն մեխանիզմները կամ գործիքները, որոնցով բարելավվում են արձանագրված խնդիրները:

Ռազմավարական նպատակների իրականացման արդյունքների չափման և գնահատման նպատակով մշակված է «ԵԳՊԱ ստորաբաժանումների տարեկան գործողությունների պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման կարգ»:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը ընդհանուր առմամբ համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ բուհի ռազմավարական ծրագիրը վերլուծության արդյունքնում բարելավվել է:

Միաժամանակ, առկա է ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման ցուցիչների չհիմնավորվածություն, ինչպես նաև կատարողականի ցուցիչները կապված չեն ՌԾ նպատակների հետ, որն էլ ռիսակային է դարձնում բուհի զարգացման գնահատման օբյեկտիվության գործընթացը:

ՌԾ-ի իրականացման համար հստակ մշակված ուղենիշները, որտեղ նշված են ծրագրի իրականացման քայլերը, և չափելի նպատակները, կօգնեն ՄՈՒՀ-ին գործել առավել նպատակաուղղված: Այնուամենայնիվ, ՌԾ-ի հիման վրա դժվար է բացահայտել այն ռեսուրսների շրջանակը, որը բուհը պատրաստվում է տրամադրել ռազմավարական նպատակների իրականացման համար:

Որոշակիորեն ընդծված է ներքին շահակիցների մասնակցությունը ՌԾ մշակման գործընթացում, սակայն արտաքին շահակիցների ընդգրկվածությունը դեռևս արդյունավետ չէ: Այս հարցին հետևողական մոտեցում ցույց չտալու դեպքում, կարող են խնդիրներ առաջ գալ բուհի նոր կրթական ծրագրերի արդյունավետությունը բարձրացնելու և տարածաշրջանի աշխատաշուկայի հետ համագործակցությունն ապահովելու առումով: Փորձագիտական խմբի կողմից դրական է գնահատվում այն, որ ոլորտի գործատուների հետ արդեն իսկ համագործակցություն սկսվել է:

Որպես շահակիցների կարիքների վերհանման հիմնական մեխանիզմ մշակված են բազմաթիվ հարցումներ, որոնք լրամշակման կարիք ունեն: Արդյունավետ չէ ունենալ յուրաքանչյուր հարցվողների խմբի վերաբերյալ առանձին երկու էջանոց կանոնակարգեր (11

կանոնակարգ), որոնց հիմնական մասը հաճախ կրկնվում է: Չնայած այն բանին, որ մշակվել են բազմաթիվ կանոնակարգեր, ուղեցույցներ՝ փորձագիտական խումբը միաժամանակ նշում է, որ առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման բուհի առանձնահատկությունները ընդգծող ընթացակարգերի սակավությունը խոչընդոտ կարող է հանդիսանալ արդյունավետ ռազմավարական զարգացումն ապահովելու գործում:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հաշվի առնելով, որ բուհն ունի ռազմավարական ծրագիր, որը բարելավվել է և որտեղ ձևակերպված են բուհի առաքելությունը, առաքելությունից բխող նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև յուրաքանչյուր խնդրի համար կատարողականի ցուցիչներ, բուհի ծավալած գործունեությունը հիմնականում համապատասխանում է առաքելությանը, ներքին շահակիցները մասնակցություն ունեն ռազմավարական ծրագրի մշակման և իրագործման փուլերում, փորձագիտական խումբը համարում է, որ բուհը բավարարում է չափանիշ 1-ի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. *Փորձագիտական խումբը ԵԳՊԱ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին գնահատում է* ***բավարար:***

ՉԱՓԱՆԻՇ II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունը արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

ՓԱՍՏԵՐ

2.1. **Հաստատության կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց՝ սահմանված էթիկայի կանոններին համապատասխան. և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ**:

Բուհի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրության, ենթաօրենսդրական ակտերի և կանոնադրության համապատասխան, ինքնակառավարման հիման վրա՝ միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ:

Բուհի միանձնյա ղեկավարումն իրականացնում է ռեկտորը, իսկ կոլեգիալ կառավարման մարմիններն են ԵԳՊԱ Խորհուրդը և Գիտական խորհուրդը, ռեկտորատը հանդես է գալիս որպես խորհրդատվական մարմին: Բուհի ներքին շահակցիները (դասախոս, ուսանող և այլն) ներկայացված են բուհի կառավարման համակարգում:

Բուհում գործում են համապատասխան գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ստորաբաժանումներ և կառույցներ. ֆակուլտետներ, ամբիոններ, ուսանողական խորհուրդ և այլն, որոնք գործում են համապատասխան կանոնակարգերի հիման վրա:

Բուհի կազմակերպչական կառուցվածքում առկա է հետազոտական կենտրոն, որը համակարգում է հետազոտական գործունեությունը՝ չունենալով համապատասխան մարդկային և նյութական ռեսուրսներ: Կենտրոնը ստեղծվել է 2014 թ. նոյեմբերին ՏԵՄՊՈՒՍԻ Veritas ծրագրի շրջանակներում: Կենտրոնի գործունեության նպատակներից է կրթական երրորդ աստիճանի՝ ասպիրանտուրայի բարեփոխումների իրականացումն ըստ Զալցբուրգյան սկզբունքների: Համաձայն ինքնավերլուծության զեկույցի, կենտրոնը պետք է զբաղվի գիտահետազոտական ուղղությունների մշակմամբ, ԵԳՊԱ դասախոսների և

ուսանողների հետազոտական աշխատանքների կազմակերպմամբ, համակարգմամբ և այլն: Կենտրոնի տնօրենը համարվում է ոչ հիմնական աշխատող, չկան այլ աշխատակիցներ:

ԵԳՊԱ-ի նախկին կառավարչական կառուցվածքը բարեփոխվել է 2013թ.-ին: Փորձագիտական վերլուծությունները ցույց տվեցին, որ նոր կազմակերպչական կառուցվածքը չի ապահովում կառավարման համապատասխան հիերարխիան՝ ֆակուլտետները և ամբիոնները կազմակերպչական կառուցվածքում միայն համագործակցության դաշտում են վերադաս ստորաբաժանումների հետ և ենթակա չեն կատարելու վերադասի որոշումները:

2.2. ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնելու իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Համաձայն արտաքին և ներքին իրավական փաստաթղթերի՝ դասախոսները և ուսանողները ունեն հնարավորություն բուհի կառավարման համակարգում մասնակցելու իրենց առընչվող որոշումների կայացմանը:

Բուհի կոլեգիալ կառավարման մարմիններում համապատասխան կանոնակարգերով ապահովված է ուսանողների 25 տոկոս մասնակցություն: Բուհի խորհրդում ՊԴ կազմը և ուսանողությունը ներկայացված են 25-ական տոկոսով: Դասախոսների ներկայացուցչականությունը ԳԽ-ում ապահովված է ամբիոնի վարիչների և փոքրաթիվ դասախոսների մասնակցությամբ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողների կողմից գիտխորհրդում գրեթե հարցեր չեն բարձրացվում, սակավ են այն դեպքերը, երբ որոշումներն ընդունվել են դասախոսների կամ ուսանողների առաջարկությունների հիման վրա: Չկան կառավարման գործընթացներում ամբիոնի վարիչներից բացի այլ դասախոսների մասնակցության օրինակներ:

2.3. ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Բուհում առկա է հնգամյա և տարեկան պլանավորման ու հաշվետվողականության գործընթաց՝ հաստատված ռազմավարական ծրագրի և ժամանակացույցի շրջանակներում: Ֆինասական պլանավորումն իրականացվում է բուհի, այլ ոչ թե ֆակուլտետների և առանձին ՄԿԾ-ների մակարդակով: Յուրաքանչյուր տարվա համար մշակվում է բյուջե, որտեղ արտացոլված են ֆինանսական մուտքերը և ծախսերն ըստ առանձին հոդվածների: Ստորին օղակների ֆինանսական պլանավորումը ինտեգրված է ընդհանուր բյուջեի հոդվածներում:

Գործում է հաշվետվողականության համակարգ: Ստորին օղակների հաշվետվություններում վեր հանված խնդիրները քննարկվում են ԳԽ նիստերում, ընդունվում համապատասխան որոշումներ, որոնք ուղղված են այդ խնդիրների լուծմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ պլանների իրականացման մշտադիտարկման մոտեցումներ առկա են, սակայն չկան փաստեր և վերլուծություններ հետադարձ կապի և մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ: Ազդեցությունների վերլուծություն նույնպես առկա չէ:

2.4. ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Բուհն իրականացնում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն հիմնականում հարցումների միջոցով: Հարցումների մի մասն իրականացվել է միջազգային ծրագրերի շրջանակներում, որոնց արդյունքում վեր են հանվել որոշ խնդիրներ (մատուցվող ծառայությունների և ռեսուրսների վիճակ և այլն): Թեև առկա է հարցումների ժամանակացույց, այնուամենայնիվ հարցումները պարբերական բնույթ չեն

կրում և փորձագիտական խմբին չի տրամադրվել հարցումների արդյունքների վրա հիմնված առաջընթացի որևէ վերլուծություն:

Իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունների պլանավորման, իրականացման հստակ ընթացակարգեր բուհում առկա չեն: Հարցումների հավաստիության աստիճանը հիմնավորելու նպատակով բուհի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության այլ մեթոդներ չեն կիրառվում, մասնավորապես՝ առկա իրավիճակի բազմակողմանի վերլուծություններ, արձանագրված բաց քննարկումներ և այլն: Հարցումների արդյունքում վեր հանված խնդիրները չեն արտացոլում բուհի գործունեության վրա ազդող գործոնների ամբողջական համակարգը: Թեև տվյալների ստացման և օգտագործման մեխանիզմներ առկա են, սակայն դրանց հավաստիության հիմնավորումներ առկա չեն:

Արտաքին միջավայրի վերլուծությունները սակավ են: Օրինակ, բացակայում էին աշխատաշուկայի համակարգված վերլուծություններ՝ որոշումների կայացման և հետագա գործունեության պլանավորման համար:

2.5. Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում)

Բուհում ամրագրված է որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքը /ՈԱ ձեռնարկ/, սակայն առկա են այդ սկզբունքն իրականացնելու առանձին օրինակներ: Մասնավորապես՝ այդ մոտեցմամբ վերաձևակերպվել է բուհի առաքելությունը, վերանայվել է ուսանողների գնահատման համակարգը: Ընդհանուր առմամբ ՊԻԳԲ շրջափուլը դեռևս փակված չէ, և իրականացված գնահատումների վերլուծություններ առկա չեն: Կառավարման գործընթացները գտնվում են պլանավորման, իրականացման և որոշ չափով գնահատման փուլում:

2.6. ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տվյալների հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ բուհում հավաքագրվում է վիճակագրական բնույթի տեղեկատվություն, ուսանողների թվաքանակի, շարժի և առաջադիմության վերաբերյալ, որը քննարկվում է բուհի ԳԽ-ում, ինչպես նաև հաստատված ձևաչափերով տրամադրվում է արտաքին վիճակագրական կառույցներին:

ՄԿԾ-ների և բուհի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է տարբեր հաշվետվություններում:

Համաձայն ինքնավերլուծության, բուհի գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ դեռևս չեն գործում:

2.7. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ:

Կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների մասին բուհում գործում է հրապարակային տեղեկատվության տարածման քաղաքականություն և ընթացակարգ: Ստեղծված են տեղեկատվության հրապարակման միջավայր և հնարավորություններ (կայք էջ, ավարտական աշխատանքների բաց պաշտպանություն, ցուցադրություններ): Տեղեկատվության հրապարակումները գնահատվել են որոշ հարցումների միջոցով:

Շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական գնահատման համար կիրառվում են բուհում գործող հաշվետվությունների համակարգը և ամփոփիչ

ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները, սակայն կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող հստակ և օբյեկտիվ մեխանիզմներ առկա չեն:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ բուհի կազմակերպական կառուցվածքում կատարվել են որոշ փոփոխություններ (ՈԱԿ, հետազոտական կենտրոն, կարիերայի կենտրոն), որոնք միտված են կառավարման համակարգի կատարելագործմանը, սակայն համակարգը դեռևս հետագա բարեփոխումների կարիք ունի: Կառավարման համակարգը անմիջականորեն կապված չէ ռազմավարական խնդիրների և նպատակների հետ: Այն պարագայում, երբ բուհի արջև դրված է արվեստի հետազոտությունը զարգացնելու խնդիր (շեշտադրված է բուհի ռազմավարության մեջ), բուհի կառավարման համակարգում նկատվում է համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսների պակաս:

Չնայած այն բանին, որ գործում են բուհերին բնորոշ հիմնական ստորաբաժանումներ, առկա է կազմակերպչական կառույցների ոչ արդյունավետ տեղաբաշխում, որը բուհի առաքելության և հիմնական նպատակների իրականացման համար ռիսկային է: Մասնավորապես, արդյունավետ չէ ունենալ ոչ բավարար ռեսուրսներով գործող ստարաբաժանում (հետազոտական կենտրոն) կամ ավելորդ կառավարման օղակներ, որոնք կարելի է միավորել (ուսումնական վարչության ստորաբաժանումները) ռեսուրսներն առավել արդյունավետ օգտագործելու համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ նման փոքր բուհի համար արդյունավետ չէ ուսումնական վարչությունը մասնատել երկու առանձին ստորաբաժանումների: Արդյունքում ձևավորվել են վարչության պետի, երկու բաժինների վարիչների և ընդամենը երկու աշխատակիցների հաստիքներ, և կառավարման ռեսուրսը օպտիմալ չի բաշխված:

Բուհի որոշումներ կայացնող կառույցներում արտաքին շահակիցների թույլ ներգրավվածությունը կարող է սահմանափակել արտաքին պահանջների և զարգացումների վերաբերյալ իրազեկվածությունը: Արտաքին միջավայրի սակավաթիվ վերլուծությունները կհանգեցնեն բուհի գործունեության ոչ ճիշտ պլանավորման և ռազմավարական զարգացման հետագա ռիսկերի: Դասախոսների և, հատկապես, ուսանողների թույլ ակտիվությունը բուհի որոշումներ կայացնելու գործընթացում իր հերթին նվազեցնում է նրանց կողմից խնդիրների վերհանմանն ու դրանց լուծմանը, որը կազդի մոտիվացիայի վրա:

Փորձագիտական խումբը դրական է համարում բուհում իրականացված մի շարք հարցումները, որոնց միջոցով վեր են հանվել որոշակի խնդիրներ: Սակայն, կատարված հարցումներից բացի, բուհի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության այլ հավաստի մեթոդների և վերլուծությունների բացակայությունը բավականին նեղացնում է իրավիճակի իրատեսական գնահատման հնարավորությունները:

Հիմք ընդունելով ՌԾ նպատակները՝ բուհը կարիք ունի բարելավել իր կառավարման համակարգը և օպտիմալացնել կազմակերպչական կառուցվածքը՝ դրանք դարձնելով առավել արդյունավետ և իր ռազմավարությանն ու գործունեությանն ավելի համահունչ:

Բուհում հավաքագրվող տեղեկատվության վերլուծությունների բացակայությունը ռիսկային է կրթական ծրագրերի բարելավման տեսակետից:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԳՊԱ-ն չի բավարարում չափանիշ 2-ի պահանջները՝ հաշվի առնելով, որ կազմակերպական կառուցվածքը համապատասխանեցված չէ բուհի ռազմավարական խնդիրների իրականացմանը, առկա է կառավարչական ռեսուրսների օպտիմալ տեղաբաշխման խնդիր, առկա չեն կառավարման համակարգի արդյունավետության վերլուծություններ, թույլ է արտաքին շահակիցների

մասնակցությունը կառավարման գործընթացներին, կառավարման համակարգում թույլ են հետադարձ կապի մեխանիզմները, մշակված փաստաթղթերը առավել արդյունավետ գործելու նպատակով վերանյման կարիք ունեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. *Փորձագիտական խումբը ԵԳՊԱ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին* ***գնահատում է անբավարար:***

ՉԱՓԱՆԻՇ III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

ՓԱՍՏԵՐ

3.1. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

ԵԳՊԱ-ում իրականացվում է 8 բակալավրական և 8 մագիստրոսական կրթական ծրագրեր (Դիզայն, Համակարգչային գրաֆիկա, Հագուստի մոդելավորում, Կիրառական արվեստ, Գրաֆիկա, Արվեստաբանություն, Գեղանկարչություն և Քանդակագործություն), ինչպես նաև մեկ հետբուհական կրթական ծրագիր (Կերպարվեստ՝ Դիզայն, Դեկորատիվ և կիրառական արվեստ մասնագիտացումներով):

Բուհի կրթական ծրագրերը ընդհանուր առմամբ համահունչ են առաքելությանը, որտեղ նշված է "*Տրամադրել բարձրագույն կրթություն՝ իրականացնելով բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրեր արվեստի տեսության, կերպարվեստի, դեկորատիվ կիրառական արվեստի, դիզայնի և ճարտարապետության ոլորտներում՝ ակադեմիական և արդի մոտեցումների կիրառման, ստեղծագործական և կրթական գործընթացները հասարակական կարիքներին համապատասխանեցման միջոցով":* Բուհը շեշտադրում է կատարում այնպիսի մասնագիտությունների (հիմնականում ոչ ակադեմիական) վրա, որոնք ավելի մեծ պահանջարկ ունեն աշխատաշուկայում: ՄՈՒՀ-ի 4 կրթական ծրագրերը (Դիզայն, Համակարգչային գրաֆիկա, Հագուստի մոդելավորում, Կիրառական արվեստ) գտնվում են համեմատաբար մշակված վիճակում:

2013թ.-ից իրականացվել է ՄԿԾ-երի արդի վիճակի ուսումնասիրություն, և Համաշխարհային բանկի Նորարարությունների մրցակցային հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում վերանայվել են 4 բակալավրական և 4 մագիստրատրոսական ծրագիր (Դիզայն, Համակարգչային գրաֆիկա, Հագուստի մոդելավորում, Կիրառական արվեստ): Համաձայն բուհի ինքնավերլուծության, ԵԳՊԱ-ում իրականացվող ծրագրերից հատկապես Դիզայն, Հագուստի մոդելավորում և Համակարգչային գրաֆիկա ՄԿԾ-երը մեծ պահանջարկ են վայելում դիմորդների շրջանում, քանի որ առավելագույնս արձագանքում են աշխատաշուկայում ժամանակակից զարգացումներին և միտումներին, սակայն ՄԿԾ-ների վերջնարդյունքների, դասընթացների նկարագրերի և ուսումնական պլանների մշակման գործընթացներում գործատուները ներգրավված չեն եղել:

ՄՈՒՀ-ը մեկնարկել է ծրագրերի վերանայումը 4 ՄԿԾ-ներից (Դիզայն, Հագուստի մոդելավորում, Համակարգչային գրաֆիկա, Կիրառական արվեստ), որոնք կարող են ապահովել բուհի և աշխատաշուկայի կապը: Մնացած 4-ը, որոնք ակադեմիական են (Գրաֆիկա, Արվեստաբանություն, Գեղանկարչություն և Քանդակագործություն) և արվեստի բուհի համար կարևոր, բարեփոխումների առումով դեռևս մեկնարկային փուլում են:

Մշակվել է ԵԳՊԱ-ի «Մասնագիտության կրթական ծրագրերի և վերանայման ձեռնարկ», որը չի արտացոլում արվեստի բուհի կրթական ծրագրերի առանձնահատկությունները:

ՄՈՒՀ-ը վերլուծել է 4 բակալավրի և 4 մագիստրատուրայի ՄԿԾ-ների համապատասխանությունը ՈԱՇ-ին: «Դիզայն» և «Համակարգչային գրաֆիկա» մագիստրոսական կրթական ծրագրերում ՀՀ ՈԱՇ նկարագրիչների և ՄԿԾ-ների վերջնարդյունքների համապատասխանության քարտեզագրումը ամբողջովին նույնն են և չեն արտահայտում այդ կրթական ծրագրերի առանձնահատկությունները:

ՄԿԾ-ներում ներկայացված չեն ընդհանրական վերջնարդյունքները ըստ շնորհվող որակավորումների:

ԵԳՊԱ-ն մասնակցելով ՏԵՄՊՈՒՍԻ ALIGN («Մասնագիտության կրթական ծրագրերի՝ որակավորումների ազգային շրջանակների հետ համադրելիության իրականանացում և ապահովում») դրամաշնորհային ծրագրին, կրթական ծրագրերի մշակման և մեթոդաբանության ձևակերպման գործընթացում փորձ է ձեռք բերել կիրառելու Որակավորումների ազգային շրջանակի հետ համադրելիության ուղենիշները: Այդ ուղենիշները գտնվում են ներդրման փուլում:

Ներկայացված կրթական ծրագրերում նկատվել են մի շարք խնդիրներ:

ՄԿԾ-ներում քարտեզագրված չեն ծրագրերի բովանդակության հաջորդականությունը և առարկաների փոխկապակցվածությունը:

Բակալավրի ուսումնական պլաններում առկա են կամընտրական դասընթացներ, սակայն ոչ ուսումնական պլաններում, ոչ ՄԿԾ-ների մեկ այլ բաղադրիչներում թվարկված չեն այդ դասընթացների անվանումները: Փորձագիտական խումբը փաստում է, որ ՄԿԾ փաթեթներում և ուսումնական պլաններում ներկայացված չէ ընտրովի առարկայացանկ:

Բակալավրի ուսումնական պլաններում նախատեսված են ուսումնական պրակտիկաներ 12 կրեդիտ ծավալով, սակայն ՄԿԾ-ներում նկարագրված չեն պրակտիկայի պահանջները, խնդիրները, առաջադրանքների պահանջները և ծավալը: Որոշ ՄԿԾ-ներում բացակայում են նաև վերջնարդյունքների ձևավորման մեջ պրակտիկայի ներդման մասնաբաժինը:

Նույն մասնագիտությունների բակալավրատուրայի և մագիստրատուրայի ՄԿԾ-ների ուսումնական պլաններում առկա են կրկնվող դասընթացներ, որի վերաբերյալ բացասական կարծիք հայտնեցին ԵԳՊԱ-ի ուսանողները:[8]

3.2. ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, ինչը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

ԵԳՊԱ-ում մասնագիտության կրթական ծրագրերի ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդները հիմնականում ներկայացված են «Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և վերանայման ձեռնարկ»-ում: Ընդհանրական ձևով դրանք նկարագրված են նաև ՄԿԾ-ներում, սակայն ներկայացված դասընթացների նկարագրերում դասավանդման և ուսումնառության մեթոդներ նկարագրված չեն:

Այսպիսով, փորձագիտական խումբը փաստում է, որ ՄԿԾ-ներում ընդգծված չեն ուսումնառության մեթոդների առանձնահատկությունները տվյալ ՄԿԾ-ի հիմնական նպատակներին համահունչ:

Դասընթացի նկարագրերում բացահայտված չէ ինքնուրույն աշխատանքի բնույթը, ծավալը, առաջադրանքների քանակը, գնահատման ձևերը, ժամկետները:

ԵԳՊԱ-ում 2016 թ-ին իրականացվել է դասավանդման և ուսումնառության մեթոդների

[8] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

արդյունավետության գնահատման նպատակով հարցումներ ուսանողների շրջանում, որից հետո որոշակի բարելավումներ են իրականացվել դասավանդման մեթոդներում: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողներն ընդհանուր առմամբ բավարարված են կիրառվող դասավանդման մեթոդներից:

Միևնույն ժամանակ պարզ դարձավ, որ հարցումները սակավաթիվ են և, չնայած ներկայացված ժամանակացույցի, չեն արձանագրվել փաստեր այդ հարցումների պարբերականության վերաբերյալ: Վերհանված խնդիրների փաստացի վերլուծության, ինչպես նաև հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ չեն գործում:

ՊԴ կազմի համար դասավանդման և ուսումնառության մեթոդների վերաբերյալ վերապատրաստումներ չեն իրականացվում:

3.3. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

ԵԳՊԱ-ում 2013 թ-ից մշակվել և կիրառվում է <Ուսանողի գնահատման համակարգ, հայեցակարգային դրույթներ> փաստաթուղթը, որում սահմանված է, որ ԵԳՊԱ-ում գնահատումը իրականացվում է ըստ ՄԿԾ-ի ուսումնառության վերջնարդյունքների և շարադրված են գնահատման չափանիշերը և գնահատականի բաղադրիչները: Գնահատման համակարգը ենթարկվել է փոփոխության և վերայանման՝ հիմնվելով Որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացված հարցումների, քննարկումների և առաջարկությունների վրա: Վեր են հանված գնահատման համակարգի որոշ խնդիրներ և կատարվել են համակարգի բարելավման աշխատանքներ, մասնավորապես, փոփոխվել է գնահատման բաղադրիչների քանակը:

Ներկայացված դասընթացների նկարագրերում սահմանված են գնահատման մեթոդները: Առկա են նաև ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գնահատման չափանիշներ:

ԵԳՊԱ-ում ամփոփիչ ատեստավորումը նույնպես անցկացվում է սահմանված կարգով: Որակավորման շնորհումը իրականացվում է հատուկ հանձնաժողովի կողմից, որում ներգրավված են պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ և մասնագիտական ոլորտի արտաքին մասնագետներ: Բակալավրի կրթական ծրագրով ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզի պատրաստման համար ուսանողներին տրվում է «Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման ուղեցույց», որտեղ նկարագրված են ներկայացվող պահանջները: Սակայն ուղեցույցում բակալավրի ավարտական աշխատանքին և մագիստրոսական թեզերին ներկայացվող պահանջները է նույնն են:

«Ուսանողի գնահատման համակարգ» հայեցակարգում նկարագրված են ակադեմիական ազնվության դրութեր, սակայն ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված քաղաքականություն չի կիրառվում: Բուհում մշակված չեն ակադեմիական ազնվության ապահովման հստակ մեխանիզմներ:

3.4. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը:

ALIGN դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացվել է փորձի փոխանակում և մշակվել են ԵԳՊԱ-ի ՄԿԾ-երի նկարագրերի (Դիզայն և Համակարգչային գրաֆիկա) ձևաչափեր և համադրելիության գործիքակազմ: Բուհում մշակվել է ուսանողների շարժունության կարգ և կրեդիտների փոխանակման և կուտակման եվրոպական համակարգի կիրառման ուղենիշների ուղեցույց:

Բուհը իրականացրել է բենչմարքինգ, սակայն ոչ բոլոր (միայն 5) ծրագրերի համար: Իրականացված բենչմարքինգը չի նպաստել ուսանողների և դասախոսների շարժունությանը: ՄԿԾ-ների շրջանակներում դասախոսների շարժունություն չի գրանցվել: Ուսանողների և դասախոսների շարժունությանը խոչընդոտող հիմնական խնդիրներից բուհը համարում է օտարալեզու ՄԿԾ-ների և դասընթացների բացակայությունը:

3.5. ՄՈՒՀ-ը որդեգրել է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

ԵԳՊԱ-ն որդեգրելով պլանավորում-իրականացում-ստուգում-բարելավում սկզբունքը բոլոր գործընթացների համար, նույն մոտեցումն է սկսել կիրառել նաև ՄԿԾ-երի իրականացման և բարելավման ուղղությամբ, սակայն այդ առումով ՊԻԳԲ շրջափուլը դեռևս փակված չէ: ՄԿԾ-երի մշտադիտարկման և արդյունավետության գնահատման գործընթացը մանրամասն նկարագրված է ՈԱ ձեռնարկում, որը կազմվել է 2016թ-ին:

«ԵԳՊԱ առկա ռեսուրսների և ծառայությունների արդյունավետության գնահատում» հարցման արդյունքում վերազինվել են «Հագուստի մոդելավորում», «Դեկորատիվ կիրառական արվեստ», «Դիզայն», «Համակարգչային գրաֆիկա» լաբորատորիաներն ու արհեստանոցները:

ՄԿԾ-ների մշտադիտարկման և արդյունավետության գնահատման գործընթացներին հիմնականում մասնակցում են ներքին շահակիցները, իսկ արտաքին շահակիցների մասնակցությունը դեռևս ակտիվ չէ: Հիմնականում արտաքին շահակիցները ՄԿԾ-ների արդյունքը կարող են գնահատել ատեստավորման հանձնաժողովների եզրակացությունների միջոցով, որտեղ նրանք կազմում են հանձաժողովի անդամների 50%-ը: ՄՈՒՀ-ում ՄԿԾ-ների մշտադիտարկման կարևոր մեխանիզմներից են հարցումները (մասնավորապես շրջանավարտների շրջանում), որոնք հնարավորություն են ստեղծում վերհանել խնդիրները և ներկայացնել ամբիոններ:

Որոշ դասընթացների (8 դասընթաց) արդյունավետության գնահատման նպատակով 2016թ. կազմակերպվել է հարցում ուսանողների շրջանում: Իսկ ՄԿԾ-ների արդյունավետությունը գնահատելու նպատակով վերջին հարցումը ՈԱ կերտրոնը կազմակերպել է շրջանավարտների շրջանում 2014թ., որին մասնակցել են ընդհամենը 18 շրջանավարտ:

ՄԿԾ-ների արդյունավետությունը պարզելու նպատակով 2014թ. ՈԱ կենտրոնը հարցում է կազմակերպել նաև գործատուների շրջանում: Փորձագիտական խմբին հասանելի դարձած տեղեկատվության համաձայն հարցմանը մասնակցել է 10 գործատու, որոնցից 6-ը տեղյակ են եղել ՄԿԾ-ների և դրանց որակավորումների մասին, իսկ 4-ը՝ ոչ:

ԵԳՊԱ-ում առկա են ՄԿԾ-ների մշտադիտարկման և արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն իրականացման փոքրաթիվ օրինակներ: Հարցումները դեռևս սակավաթիվ են և ներքին, և արտաքին շահակիցների շրջանում և չեն կրում պարբերական բնույթ: Այդ գործառույթները ընդհանուր առմամբ բուհում չեն իրականացվում բոլոր ՄԿԾ-ների համար, և չի իրականացվում ծրագրերի բովանդակությունների համակարգված վերանայում:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Ակադեմիայի կրթական ծրագրերը ընդհանուր առմամբ համահունչ են առաքելությանը, սակայն առկա են կրթական ծրագրեր, որոնք դեռևս բարեփոխումների չեն ենթարկվել: Բուհի ուշադրության կենտրոնում են 4 ՄԿԾ-ներ (Դիզայն, Հագուստի մոդելավորում, Համակարգչային գրաֆիկա, Կիրառական արվեստ), որոնք կարող են ապահովել բուհի և աշխատաշուկայի կապը: Մնացած 4-ը, որոնք ակադեմիական են (Գրաֆիկա, Արվեստաբանություն, Գեղանկարչություն և Քանդակագործություն), գնահատվելով որպես առվեստի բուհերի համար կարևորագույն ծրագրեր, ներկայումս կրթական բարեփոխումների առումով մեկնարկային փուլում լինելով, ռիսկային են դարձնում ՄԿԾ-ների համահունչությունը բուհի առաքելությանը՝ աշխատաշուկայի արդի

պահանջներին հապմատասխան մասնագետների պատրաստման առումով: Առավել ևս, որ այդ ոլորտները ընդգծված են առաքելության մեջ և հիմնարար են հանդիսանում բուհի զարգացման համար:

Մեկ այլ տեսանկյունից, փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ այս պարագայում բուհը շեշտադրում է կատարում նաև այնպիսի մասնագիտությունների (ոչ ակադեմիական) վրա, որոնք ավելի մեծ պահանջարկ ունեն աշխատաշուկայում:

Փորձագիտական խումբը խնդրահարույց է համարում այն փաստը, որ նկարագրված մեթոդները չեն արտահայտում ՄԿԾ-ների առանձնահատկությունները, որ մեթոդների ընտրությունը պայմանավորված չէ վերջնարդյունքներով, բացի այդ կրթական ծրագրերում ուսումնառության և դասավանդման մեթոդների կապը վերջնարդյունքների հետ հիմնականում հստակ չի արտահայտված: Սա կարող է խոչընդոտել ուսանողակենտրոն միջավայրի ձևավորմանը, ինչպես նաև նախատեսված վերջնարդյուքնների ձեռքբերմանը:

Դրական է, որ բուհում վերանայվել է գործող գնահատման համակարգը, սակայն հիմնականում ցույց չի տրված գնահատվող վերջնարդյունքների և գնահատման ձևերի միջև կապը, ինչը կարող է հանգեցնել վերջնարդյունքների ձեռքբերման ոչ արդյունավետ գնահատման: Գնահատման համակարգը փոխկապակցված չէ ուսումնառության արդյունքների հետ այն առումով նաև, որ ուսումնառության արդյունքներում ներառված հմտությունների գնահատումը հստակ ընդգծված չէ գործող համակարգում:

Արտաքին շահակիցների ներգրավվածությունը սահմանափակվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում նրանց ընդգրկվածությամբ՝ ինչը չի ապահովում արտաքին շահակիցների ընդգրկուն մասնակցությունը ՄԿԾ-ների գնահատման և բարելավման գործընթացներին:

Ողջունելի է, որ արձանագրվել են մասնագիտության կրթական ծրագրերի առանձին բարելավումներ, սակայն չեն կիրառվում ծրագրերի մշտադիտարկման, գնահատման և պարբերաբար վերանայման գործուն մեխանիզմներ և ընթացակարգեր: Հատկանշական է, որ բուհն ունի այդպիսի ընթացակարգերի մշակման ուղենիշներ: Համապատասխան ամբիոններում դեռևս հստակորեն նախանշված և համակարգված չեն ՄԿԾ-ների վերաբերյալ վերհանված խնդիրների լուծման ռազմավարությունները: Սա կվտանգի շուկայի պահանջներին համապատասխան ծրագրերի և դասընթացների արդիականացումը, դասավանդման և ուսումնառության նոր մեթոդների ներառումը ՄԿԾ-ներ:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Փորձագիտական խումբը փաստելով, որ մասնագիտական կրթական ծրագրերի առումով բուհը իրականացրել է բարելավման քայլեր, միաժամանակ գտնում է, որ ԵԳՊԱ-ն չի բավարարում չափանիշ 3-ի պահանջներին՝ հաշվի առնելով, որ արվեստի բուհի համար կարևոր և հիմնարար մասնագիտական կրթական ծրագրերը դեռևս գտնվում են բարեփոխումների մեկնարկային փուլում, առկա չեն ուսանողակենտրոն ուսուցմանը համապատասխան դասավանդման մեթոդների ընտրության սկզբունքներ և մոտեցումներ, բավարար հիմքերի վրա դրված չի ակադեմիական ազնվության և գրագողության դեմ պայքարը, արտաքին շահակիցների մասնակցությունը կրթական ծրագրերի մշակմանը դեռևս շոշափելի չէ և լիարժեք չեն կիրառվում ՄԿԾ-ների մշտադիտարկման մեխանիզմներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. *Փորձագիտական խումբը ԵԳՊԱ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին* ***գնահատում է անբավարար:***

ՉԱՓԱՆԻՇ IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

ՓԱՍՏԵՐ

4.1. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ

Բուհում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության ինչպես դասական (ՀՀ բուհերում կիրառվող կարգեր), այնպես էլ բուհի առանձնահատկություններից բխող մեխանիզմներ (Բակալավրի կրթական ծրագրով ընդունելության ներքին քննությունների անցկացման կարգ, ԵԳՊԱ ընդունելության քննությունների հանձնարարություններ և գնահատման չափանիշեր, ԵԳՊԱ-ի մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության քննությունների անցկացման կարգ, ԵԳՊԱ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգ): Բակալավրի որակավորման ուսուցման ընդունելությունն իրականացվում է տվյալ ուստարվա համար ՀՀ Կառավարության հաստատած մասնագիտությունների ցանկին, պահանջներին և չափանիշներին համապատասխան:

Բուհը նաև իրականացնում է հանդիպումներ ավագ դպրոցներում, արվեստի դպրոցներում, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, որոնց ընթացքում ԵԳՊԱ անձնակազմը ներկայացնում է բուհի կրթական ծրագրերը, ուսումնառելու հնարավորություններն ու պայմանները, ինչպես նաև հարց ու պատասխանի միջոցով սպառիչ տեղեկատվություն է տրամադրում ԵԳՊԱ հնարավոր դիմորդներին: Մագիստրատուրայի ՄԿԾ-երի ընդունելությունն իրականացվում է ընդունող և մասնագիտական հանձնաժողովների կողմից՝ համաձայն «ԵԳՊԱ-ի մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության քննությունների անցկացման կարգ»-ի: Ուսանողների հավաքագրման մեխանիզմների արդյունավետությունը ստուգելու նպատակով 2016 թվականին իրականացվել է հարցումներ, որին մասնակցել են 97 դիմորդ: Դիմորդների մեծամասնությունը բավարար է գնահատել բուհի կողմից իրականացված աշխատանքները: Ընդունելության մեխանիզմների որակի գնահատման նպատակով յուրաքանչյուր ակադեմիական տարվա սկզբին իրականացվում են հարցումներ առաջին կուրսեցիների շրջանում:

4.2 ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության քաղաքականություն և ընթացակարգեր

ԵԳՊԱ-ում գործում են ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության մի քանի մեխանիզմներ: Ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմ է ուսանողների ներգրավվածությունը բուհի կառավարման տարբեր օղակներում, մասնավորապես՝ ըստ ԵԳՊԱ կանոնադրության կառավարման խորհրդում ուսանողների ներգրավվածությունը կազմում է 25%: Ուսանողների կարիքների վերհանման մեկ այլ մեխանիզմ է իրականացվող հարցումները որակի կենտրոնի կողմից: Ուսանողների կարիքների վերհանմանը նպաստում է նաև ուսանողական խորհուրդը, որը իրականացնում է հարցումներ և տարատեսակ միջոցառումներ, ինչպես նաև ներգրավված է ուսանողների հետ տարվող աշխատանքներում և կարիքների վեր հանման գործընթացներում:

ՏԵՄՊՈՒՍ-ի ESPAQ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ԵԳՊԱ-ում ստեղծվել է Ուսանողական համայնք, որը մասնակցում է բուհի որակի ապահովման գործընթացներին: Սակայն միևնույն ժամանակ փորձագիտական այցերը ժամանակ պարզ դարձավ, որ բարձր չէ

ուսանողների շահագրգռվածությունը՝ վերհանելու իրենց կարիքներն ու մասնակցելու բուհում կատարվող գործընթացներին:

4.3. ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար

Բուհում ուսանողները կարող են խորհրդատվություն ստանալ դասախոսներից, կուրսի ղեկավարներից, ամբիոններից և դեկանատներից, սակայն հիմնականում խորհդատվությունը ուսանողները ստանում են դասախոսներից, քանի որ դասախոսների և ուսանողների միջև կապը ավելի ինտենսիվ է՝ ելնելով դասապրոցեսի կազմակերպման տեսակից, որը ավելի անհատական է և իրենից ենթադրում է խորհրդատվություն առարկաների մեծամասնության համար (բացառությամբ տեսական առարկաները):

Բուհում որպես լրացուցիչ պարապմունքներ են դիտարկվում վարպետաց դասերը, սեմինարները, ցուցահանդեսները, ինչպես տեղացի, այնպես էլ արտերկրից ժամանած մասնագետների մասնակցությամբ:

Բուհը ուսանողներին առաջարկում է անգլերեն, իտալերեն, ֆրանսերեն, ռուսերեն և հայերեն լեզուների լրացուցիչ պարապմունքներ, սակայն լեզուների դասընթացները բացակայում են կրթական ծրագրերից՝ որպես պարտադիր առարկաներ, ինչը չի համապատասխանում բուհի նպատակներին:

4.4. ՄՈՒՀ-ում սահմանված է վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց՝ ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով:

Ուսանողներին տրամադրվում է օժանդակություն և ուղղորդում տարբեր ստորաբաժանումների կողմից (դեկանատներ, ամբիոններ, արտաքին կապերի բաժին, ուսումնական վարչություն): Չնայած նրան, որ բուհում չկան ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց, բուհում գործում է բաց դռների սկզբունքը և ուսանողները կարող են ցանկացած հարցով դիմել բուհի բոլոր ստորաբաժանումներին և ստանան իրենց հարցերի պատասխանը: Բուհն արժևորում է օժանդակություն և ուղղորդում տրամադրելու մեխանիզմների արդյունավետության գնահատումը, ինչի նպատակով շարունակաբար հարցումներ է իրականացվում:

4.5. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Ուսանողների կարիերային նպաստելու նպատակով՝ ԵԳՊԱ-ն շարունակաբար համալրում է իր անձնակազմը մասնագիտական ոլորտում աշխատող պրոֆեսորադասախոսական կազմով՝ ապահովելով վերջիններիս անմիջական շփումն ու համագործակցությունն ուսանողների հետ: 2013 թվականից ԵԳՊԱ-ում գործում է Կարիերայի կենտրոնը, որը կոչված է աջակցելու ԵԳՊԱ ուսանողներին/շրջանավարտներին: Ուսանողական հարցումները և փորձագիտական այցը ցույց տվեցին, որ չնայած ձեռնարկվող քայլերին, ուսանողների մի մասն է տեղյակ կարիերային նպաստող ծառայություններից: Ուսանողների միայն 48%-ն է տեղեկցված կարիերայի կենտրոնի մասին և շատ քիչ տոկոսն է օգտվում կենտրոնի ծայություններից:

4.6. ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Բուհում ստեղծվել է ԵԳՊԱ հետազոտական կենտրոն, որի նպատակն է համակարգել բուհում կատարվող հետազոտական աշխատանքները, մշակել ու իրականացնել գիտահետազոտական ծրագրեր՝ ընդգրկելով ոչ միայն պրոֆեսորադասախոսական կազմին, այլ նաև մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերի ուսանողներին: Բուհն ունի նաև

գիտական ամսագիր, որտեղ ուսանողները հնարավորություն ունեն տպագրել հոդվածներ: Չնայած կատարված աշխատանքների և հետազոտական կենտրոնի ստեղծմանը, փորձագիտական վերլուծություններից պարզ դարձավ, որ դեռևս ցածր է ուսանողների մասնակցությունը հետազոտական աշխատանքներին: Հետազոտական կենտրոնի ստեղծումն արդեն իսկ նշանակալի քայլ է, սակայն նախաձեռնված միջոցառումները և մեխնիզմները դեռևս չեն նպաստում ուսանողների ներգրվմանը գիտահետազոտական աշխատանքներում:

4.7. ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

ԵԳՊԱ-ում գործում են ուսանողների իրավունքների պաշպանության տարբեր մեխանիզմներ: Ուսանողների իրավունքները բուհում սահմանվում են բուհի կանոնադրությամբ և ներքին կանոնակարգերով: Ուսանողի և բուհի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են նաև բուհի և ուսանողի միջև կնքվող պայմանագրով: Բուհում գործունեություն է ծավալում Ուսանողական խորհուրդը, որը պաշտպանում և ներկայացնում է ուսանողների շահերը բուհի կառավարման մարմիններում. Ուսանողական խորհրդից են ընտրվում այն ուսանողները, ովքեր ներգրավվում են այդ կառավարման մարմիններում: Ուսանողական խորհուրդը բարձրաձայնում է ուսանողների անհանգստությունները, խնդիրները և առաջարկությունները, անհրաժեշտության դեպքում առաջարկում լուծումներ: Ուսանողների հետ հանդիպումները փաստեցին, որ ուսանողական խորհուրդը ծավալում է ակտիվ գործունեություն ինչպես իրավունքների պաշտպանության, այնպես էլ կրթական գործընթացը ավելի որակյալ դարձնելու ուղղությամբ:

4.8. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ

ՄՈՒՀ-ում ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներից առավել հաճախակի օգտագործվում են հարցումները, որոնք իրականացվում են ինչպես որակի ապահովման կենտրոնի, այնպես էլ ամբիոնների կողմից, տարբեր կուրսերի ուսանողների հետ: Ստացված տվյալների հիման վրա բուհը կատարել է որոշ բերափոխումներ (օրինակ՝ գնահատման համակարգի բարելավում:

ESPAQ ծրագրի ընթացքում ստեղծվել է ուսանողական խումբ, որը աջակցում է որակի ապահովման կենտրոնին հարցումների իրականացման հարցում: Բուհում բացի իրականացվող հարցումներից առկա չեն կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և վերահսկման մեխնիզմներ:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Բուհում գործող ուսանողների հավաքագրման ընթացակարգերը հստակ են և հաշվի են առնում բուհի առանձնահատկությունները: Ապագա դիմորդների հետ կազմակերպվող միջոցառումները նպաստում են հավաքագրման աշխատանքների արդյունավետությանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում Ուսանողական համայնքի առկայությունը բուհում, որն ուսումնասիրում է ուսանողների կրթական կարիքները և փորձում է բարձ օղակներում քննարկել դրանք: Ուսանողական համայնքում մեծաթիվ ուսանողների ներգրավվածությունը կնպաստի ուսանողների մոտ իրենց առնչվող խնդիրների բարձրացմանը և կմեծացնի նախաձեռնողականությունը:

Բուհի առանձնահատկություններից ելնելով՝ յուրաքանյուր ուսանող ստանում է համապատասխան աջակցություն և անհատական մոտեցում իր աշխատանքի որակի լավացման տեսանկյունից, ինչպես նաև ուսանողներն հնարավորություններ ունեն մասնակցելու լրացուցիչ պարապմունքների, ինչն էլ նպաստում է ուսանողների մոտիվացիայի բարձրացմանը և կրթական միջավայրի լավացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Կարիերայի կենտրոնի գոյությունը: Բուհն անելիքներ ունի կենտրոնի վերաբերյալ տեղեկատվության տարածման առումով, քանի որ ուսանողների մեծ մասը տեղյակ չէ կենտրոնի գործունեության մասին և գրեթե չի օգտվում նրա ծառայություններից: Կենտրոնի գործունեության մասին տեղեկատվության բարձրացումը և առավել ակտիվությունը կնպաստի ուսանողների և գործատուների համագործակցությանը և կարող է ազդեցություն ունենալ շրջանավարտների զբաղվածության հարցի լուծման տեսակետից:

Գնահատելով ՈՒԽ և Ուսանողական համայնքի առկայությունը բուհում և գտնելով, որ նրանք մեծածավալ աշխատանք են տանում բուհում, այնուամենայնիվ փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում ուսանողների մեծամասնության անտարբերությունը վերոհիշյալ մարմինների աշխատանքների նկատմամբ, ինչը չի նպաստում ուսանողների կարիքների վերհանմանն ու շահերի պաշտպանությանը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հաշվի առնելով, որ բուհն ունի ուսանողների հավաքագրման և ընդունելության հստակ ընթացակարգ, ուսանողների կրթական կարիքների վերհանմանը միտված որոշ մեխանիզմներ, ուսանողները հնարավորություն ունեն մասնակցելու լրացուցիչ պարապմունքների և ստանալու խորհրդատվություններ, բուհում գործում են մարմիններ, որոնք իրենց գործունեությամբ օժանդակում են ուսանողներին և նպաստում նրանց կրթական կարիքների լուծմանը, փորձագիտական խումբը գտնում է, որ բուհն ընդհանուր առմամբ ապահովում է ուսանողների համար արդյունավետ կրթական միջավայր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. *Փորձագիտական խումբը ԵԳՊԱ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար:***

ՉԱՓԱՆԻՇ V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

ՓԱՍՏԵՐ

5.1. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Բուհում մարդկային ռեսուրսների ներգրավման և կառավարման գործընթացների հիմքում ընկած են ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, ԵԳՊԱ կանոնադրությունը, ԵԳՊԱ ստորաբաժանումների և աշխատատեղերի տարակարգերի մասին կանոնակարգը և ԵԳՊԱ ներքին կարգապահական կանոնակարգը:

Բուհում ՊԴ և օժանդակ կազմի ձևավորման և ընտրության համար գործում է <<Ստորաբաժանումների և աշխատատեղերի տարակարգերի մասին կանոնակարգ>>-ը, որը հաստատվել է 2016 թվականին: Այս կանոնակարգով սահմանվում են ինչպես գործող տարակարգերը (դասախոս, ասիստենտ, դոցենտ, պրոֆեսոր և այլն), այնպես էլ նրանց ներկայացվող պահանջներն ու բնութագրերը: Կանոնակարգում տրված են ՊԴ և ուսումնաօժանդակ կազմի ձևավորման կարգը, աշխատատեղերի զբաղեցման մրցութային ընթացքը և այլն:

<<ԵԳՊԱ ներքին կարգապահական կանոնակարգ>>-ով սահմանվում է աշխատակիցների խրախուսման, տույժի ենթարկելու և աշխատանքից հեռացնելու քաղաքականությունը, որը ներառում է աշխատանքային կանոնները, աշխատողների

ընդհանուր իրավունքներն ու պարտականությունները, էթիկայի կանոնների պահպանման, կարգապահության, աշխատանքային տույժի, աշխատողների խրախուսման, կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին դրույթները և այլն:

ԵԳՊԱ-ում դասավանդում են 3 ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 5 գիտությունների դոկտոր, 37 պրոֆեսոր, 23 գիտությունների թեկնածու, 25 դոցենտ: Բուհի պրոֆեսորադասախոսական կազմը ներառում է ոլորտում հայտնի արվեստագետներ և ունի անհրաժեշտ մասնագիտական կարողություններ:

5.2 **ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:**

Չնայած բուհում գործող ստորաբաժանումների և աշխատատեղերի տարակարգերի մասին կանոնակարգում սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող ընդհանրական պահանջներ, ներկայացված կրթական ծրագրերում դեռևս սահմանված չեն պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ:

5.3. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Դասախոսական կազմի պարբերաբար գհատման համար բուհում 2015 թ-ին մշակվել է դասընթացի մեթոդաբանության արդյունավետության վերաբերյալ հարցման կանոնակարգ, որում նշվում է, որ «*ԵԳՊԱ-ում դասախոսների գնահատումը կատարվում է հետևյալ բաղադրիչներով՝*

- *Հարցումներ ուսանողների շրջանում,*
- *Ամբիոնների վարիչների կողմից աշխատանքի արդյունավետության գնահատում,*
- *Գործընկերային գնահատում՝ դիտումների ժամանակ գործընկերների արձագանքը ուսանողների հետ կատարված աշխատանքի վերաբերյալ,*
- *դասախոսների ստեղծագործական աշխատանքների ցուցադրումներ»:*

Բուհի ինքնավերլուծության մեջ նշվում է, որ հարցումներ ՈԱ կենտրոնի կողմից սկսվել են իրականացվել 2013 թվականից, սակայն փորձագիտական խմբին հասանելի էին միայն 2016 թվականի կատարած հարցումները, որոնք իրականացվել են ոչ համատարած և հիմնականում մասնագիտական դասընթացների շրջանակներում: Պլանավորվում է հարցումներ կիրառել նաև ոչ մասնագիտական դասընթացների շրջանակներում:

Բուհում դասախոսական գործունեության ուղղորդման և գործընկերային գնահատման կարևոր մեխանիզմ է ուսանողների աշխատանքների միջանկյալ և ամփոփիչ դիտումները, որոնք կատարում են ամբիոնի դասախոսներից կազմված դիտման խմբերի կողմից: Դիտման խումբը քննարկում է, թե որքանով են ուսանողների կատարած աշխատանքները համապատասխանում նախանշված արդյունքներին և ուղղորդում կամ խորհրդատվություն են տրամադրում կուրսի ղեկավար հանդիսացող դասախոսին առկա թերությունների շտկման ուղղությամբ:

Բուհում դասախոսական աշխատանքի գնահատման համար ցուցիչ են նաև համարվում ստեղծագործական աշխատանքների ցուցադրությունները և գիտահետազոտական աշխատանքների տպագրությունները բուհի «Տարեգիրք» գիտական հոդվածների ժողովածուում և այլ հանրապետական ու միջազգային ամսագրերում:

Այնուամենայնիվ հարկ է նշել, որ դասախոսական աշխատանքի մշտադիտարկման քաղաքականություն դեռևս առկա չէ:

5.4. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ

Բուհում նախատեսվում է մշակել դասախոսների վերապատրաստման և մասնագիտական զարգացման քաղաքականություն: Բուհը ձևավորել է վերապատրաստումների թեմաները, որոնք միտված են դասախոսական կազմի մասնագիտական հմտությունների և կարողությունների զարգացմանը:

Ակադեմիան դեռևս չի բացահայտել և հստակեցրել դասախոսների կատարելագործման վերաբերյալ կարիքները, և գործում են միայն օտար լեզվի անվճար դասընթացներ, որոնք միտված են բարձրացնելու ՊԴ կազմի օտար լեզուների իմացության մակարդակը:

5.5. ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Բուհը հայտարարում է, որ հիմնական ՊԴ կազմի միջին տարիքը բավականին բարձր է, այդ իսկ պատճառով որդեգրել է դասախոսական կազմի երիտասարդեցման քաղաքականություն: Այդ նպատակով ԵԳՊԱ-ն համատեղությամբ կամ ժամավճարային հիմունքներով երիտասարդ կադրեր է ներգրավում ուսումնական գործընթացում՝ միաժամանակ երիտասարդներին ինքնադրսևորման հնարավորություն ընձեռելով:

5.6. ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՊԴ կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման տեսակետից բուհում դեռևս չի կիրառվում հստակ քաղաքականություն, սակայն բուհը հնարավորություն է տալիս արվեստի կամ դիզայնի ոլորտի գործող մասնագետներին անվճար խմբային և անհատական ցուցադրություններ կազմակերպել ԵԳՊԱ-ի ցուցասրահում, ինչպես նաև աջակցում է այլ վայրերում ցուցահանդեսների կազմակերպմանը: Արվեստաբանության տեսաբան-մասնագետների մասնագիտական աճին նպաստելու համար ակադեմիան հնարավորություն է տալիս գիտական հոդվածները անվճար հիմունքներով տպագրել «Տարեգիրք» ժողովածուում:

Հետազոտական աշխատանքները խրախուսելու նպատակով բուհում կիրառվում են նաև հավելավճարներ:

Փորձագիտական խումբը փաստում է, որ ՊԴ անձնակազմի մասնագիտական առաջընթացի ապահովման տեսակետից բուհում դեռևս չկան համակարգված մեխանիզմներ և ընթացակարգեր:

5.7. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Ուսումնական գործընթացը կազմակերպում և անմիջականորեն համակարգում են ԵԳՊԱ-ի Ուսումնական վարչությունը, դեկանատները, ամբիոնները: Մարդկային ռեսուրսների և ընդհանուր բաժինը, ՈԱ կենտրոնը, Ֆինանսատնտեսական, Արտաքին կապերի բաժինը և այլն, օժանդակում և նպաստում են դասավանդման և ուսումնառության գործընթացի իրականացմանը: Բոլոր օղակները գործում են հիմք ընդունելով կանոնակարգող փաստաթղթերը, դասավանդման և ուսումնառության գործընթացի վարչարարությունն իրականացնելիս կարևորում են էթիկայի նորմերը:

ԴԱՍՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Փորձագիտական խումբը գտնում է, որ բուհում առկա են կրթական ծրագրերն իրականացնելու համար պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր: Պաշտոնների տեղակալման համար ենթադրվում է մրցակցային ընտրություն, որը նպաստում է, որ բուհն ունենա առավել մրցունակ և արհեստավարժ աշխատակիցներ: Այն փաստը, որ բուհի դասախոսական անձնակազմի գերակշռող մասը հիմնական աշխատողներ են, էապես բարձրացնում է ՊԴ կազմի կայունությունը և նպաստում կայուն կրթական գործառույթների

իրականացմանը: Դրական միտում է նաև այն, որ բուհում իրենց աշխատանքային գործունեությունը շարունակում են բուհի նախկին շրջանավարտները:

Մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ ձևակերպված չափանիշների բացակայությունը առավել ընդհանրական է դարձնում ՊԴ կազմին ներկայացվող պահանջները և դժվարեցնում անհրաժեշտ մասնագետների ընտրությունը: Սա նաև խոչնդոտ է հանդիսանում կրթության որակի ապահովման համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ բուհում կիրառվում են դասախոսական անձնակազմի գնահատման գործառույթներ, սակայն դրանք պարբերական բնույթ չեն կրում, ինչը կարող է խոչընդոտել դասավանդման որակի բարելավմանը:

Բուհի ՊԴ անձնակազմի կատարելագործման տեսակետից բուհում իրականացվող օտար լեզվի դասընթացները դրական կարող են համարվել: Սակայն, մասնագիտական ուղղվածության վերապատրաստումներ չեն կազմակերպվել: Այս հանգամանքը մտահոգիչ է, քանի որ մասնագիտական վերապատրաստումները հանդիսանում են դասախոսական կազմի որակական հատկանիշների բարձրացման հիմնական ուղին:

Բուհում առկա է դասախոսների երիտասարդացման գործընթաց, ինչը դրական է սերնդափոխությունն ապահովելու տեսակետից:

Մյուս կողմից դրական է, որ բուհի ՊԴ կազմում իրենց գործունեությունն են ծավալում հանրապետությունում հայտնի արվեստագետներ:

Չնայած առկա որոշ մեխանիզմներին, բուհը ներկայումս չունի դասախոսների առաջընթացին նպաստող հստակ մեխանիզմներ և ընթացակարգեր, ինչը կարող է թուլացնել է բուհի դասախոսական անձնակազմի կայունությունը:

Չնայած բուհն ապահովված է համապատասխան վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմով, սակայն նրանց գործունեության որակի ապահովման մեխանիզմների բացակայությունը խոչնդոտում է նրանց աշխատանքային գործունեության գնահատմանը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հաշվի առնելով, որ բուհում առկա են ՊԴ և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր, իրականացվում են դասախոսական կազմի գնահատումներ և օտար լեզուների դասընթացներ, որոնք ուղղված են դասավանդողների կատարելագործմանը, ինչպես նաև այն, որ բուհում դասավարդում են ոլորտի հայտնի մասնագետներ, փորձագիտական խումբը գտնում է, որ հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով ՄԿԾ-ներն իրականացնելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: *Փորձագիտական խումբը ԵԳՊԱ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին գնահատում է* ***բավարար:***

ՉԱՓԱՆԻՇ VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

ՓԱՍՏԵՐ

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Ակադեմիայի հետազոտական ոլորտի ռազմավարությունը ներկայացված է 2012-2016 և 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրերում: Միևնույն ժամանակ բուհը իր ինքնավերլուծության մեջ նշում է, որ ԵԳՊԱ-ն հիմնականում ստեղծագործական

ուղղվածություն ունի և, ի տարբերություն դասական համալսարանների և գիտահետազոտական ուղղվածություն ունեցող այլ բուհերի, ԵԳՊԱ-ում իրականացվող հետազոտությունները գիտական բնույթ հաճախ չեն կրում:

2014 թվականին բուհում ստեղծվել է Արվեստի և հումանիտար հետազոտությունների կենտրոն, կազմվել են <<ԵԳՊԱ հետազոտական կենտրոնի նպատակները, գործառույթները և կառուցվածքը>> և <<ԵԳՊԱ հետազոտական կենտրոնի ռազմավարությունը, հետազոտության ուղղությունները և ծրագրերը>> փաստաթղթերը, որում նշված են Ակադեմիայի հետազոտության ուղղությունները և հետաքրքրությունները.

ա.Արվեստի պատմության և տեսության միջգիտակարգային հետազոտությունների խրախուսում՝ պատմության բանասիրության, հնագիտության, գեղագիտության և փիլիսոփայության գիտակարգերի հետ առնչության շրջանակներում:

բ. Հայ միջնադարյան արվեստի պատմության ուսումնասիրությունը՝ կովկասագիտության, բյուզանդագիտության և արևելաքրիստոնեական մշակույթի համատեքստում ընդհանրությունների և առանձնահատկությունների վերհանմամբ, որ թույլ կտա առավել հիմնավոր արժևորել հայ արվեստը:

գ. Հայ արվեստաբանության պատմության ուսումնասիրություն, որ հիմնականում բաց ոլորտ է:

դ. Հայ ժամանակակից արվեստի ուսումնասիրություն:

ե. Կերպարվեստի, դիզայնի և կիրառական արվեստի ոլորտներում ինչպես պատմության, այնպես էլ տեսական խնդիրների և արդի պահանջների շուրջ հետազոտությունների խթանում:

Չնայած նրան, որ հետազոտական ուղղությունները բավականին ընդգրկուն են, այնուամենայնիվ, փորձագիտական այցերի ընթացքում պարզ դարձավ, որ հետազոտական գործունեությունը չի ընդգրկում բուհում գործող մասնագիտական ուղղությունները՝ հիմնականում շոշափելով արվեստի պատմության խնդիրները:

Բուհի կողմից ներկայացվել են հետազոտողի կրթական աստիճանի համար հետազոտության ոլորտներ Կերպարվեստի, Դիզայնի ու Կիրառական արվեստի մասնագիտությունների համար:

Բուհում հրատարակվում է թեկնածուական ատենախոսությունների արդյունքների և դրույթների հրատարակման համար ՀՀ ԲՈՀ-ի կողմից ճանաչվող <<Գեղարվեստի ակադեմիայի տարեգիրք>> գիտական ամսագիրը:

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Հետազոտական ոլորտում ԵԳՊԱ-ի երկարաժամկետ ռազմավարությունը, նպատակները և խնդիրները արտացոլվում են ռազմավարական ծրագրերում: Հետազոտական գործունեությունը համակարգվում է Հետազոտական կենտրոնի կողմից, որը կազմել է նաև իր ռազմավարությունը:

Բուհի հետազոտական կենտրոնի ռազմավարական ծրագրում թվարկված են երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերը: Նշված ծրագրերը իրենցից ներկայացնում են ավելի շատ տարատեսակ խնդիրների թվարկում, քան նպատակային քայլերի հերթականություն, չեն արտացոլում հետազոտական գործունեության հստակ ռազմավարություն:

6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Հետազոտությունների իրականացման քաղաքականությունն արտացոլված է ՌԾ-ում և հետազոտական կենտրոնի <<ԵԳՊԱ հետազոտական կենտրոնի ռազմավարությունը, հետազոտության ուղղությունները և ծրագրեր>>-ում:

Դասախոսների և ուսանողների անհատական հետաքրքրություններով պայմանավորված հետազոտությունները չեն փաստաթղթավորվում և համաձայն ինքնավերլուծության, դրանց ընթացքը ուղղորդվում է հետազոտական կենտրոնի կողմից իրականացվող խորհրդատվություններով, հետազոտական քննարկումներով և այլ միջոցառումներով:

Փորձագիտական խումբը փաստում է, որ բուհում առկա է հետազոտական որոշակի գործունեություն, սակայն հետազոտությունների իրականացման և զարգացման հստակ քաղաքականություն դեռևս ձևակերպված չէ և առկա չեն համապատասխան ընթացակարգեր: ՌԾ-ում նշված է նպատակներն ու խնդիրները, սակայն չկան դրանց իրականացման մեխանիզմները, որոնք պետք է ապահովեն բուհի զարգացումը, ներկայացված չեն պատասխանատուները:

Հետազոտական կենտրոնը չունի բավարար ռեսուրսներ (մարդկային և ֆինանսական) իրեն վերապահված համապատասխան գործունեություն ծավալելու համար: Մասնավորապես կենտրոնի ղեկավարը աշխատում է 0.5 դրույքով, և այլ աշխատակիցներ չկան:

Չնայած այն փաստին, որ բուհում վերջին տարիներին որոշակի գործողություններ են իրականացվում գիտահետազոտական բաղադրիչի զարգացման ուղղությամբ և ֆինանսական միջոցներ են տրամադրվում (2017-2021 թվականի ՌԾ-ում նշված է տրամադրված գումարը 6.780.000 դրամ), ԵԳՊԱ-ում մինչ օրս հետազոտական ծրագրեր չեն իրականացվել:

6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Հետազոտությունների միջազգային մակարդակի բարձրացման խնդիրները արտացոլված են 2017-2021 թվականների ԵԳՊԱ ՌԾ-ում:

ԵԳՊԱ-ն մասնակցել է TEMPUS-ի VERITAS դրամաշնորհային ծրագրին, որի շրջանակներում իրականացվում է ԵԳՊԱ-ի հետազոտողի կրթական ծրագրի վերանայում և համապատասխանեցում Զալցբուրգյան սկզբունքներին:

Հետազոտական ոլորտի միջազգայնացման նպատակով 2015 թվականից բուհերի հետ կապեր են հաստատվել, սակայն միջազգային մակարդակով համատեղ հետազոտություններ դեռևս չեն կատարվում: Միջազգային ամսագրերում հրապարակումների թիվը տարեկան կազմում է 1 հոդված:

ԵԳՊԱ-ի 4 դասախոսներ զեկույցներով հանդես են եկել արտասահմանում: ԵԳՊԱ-ում տարբեր թեմաներով զեկուցներով հանդես են գալիս արտասահմանյան մասնագետներ:

Այպիսով փորձագիտական խումբը փաստում է, որ ՌԾ-ում ամրագրված է հետազոտական աշխատանքների միջազգայնացման կարևորությունը և ձևակերպված են հիմնական մոտեցումները, սակայն այդ ուղղությամբ կատարվող քայլերը սահմանափակ են: Բուհում միջազգային մակարդակով համատեղ հետազոտություններ չեն կատարվում, բացակայում են միջազգային գիտական ծրագրերն և համատեղ թեմաներն արտասահմանյան բուհերի համապատասխան ամբիոնների և ինստիտուտների հետ:

Սակավ են դեպքերը, երբ ԵԳՊԱ-ն սեփական նախաձեռնությամբ աջակցում է անձնակազմի միջազգային գիտաժողովներին մասնակցությանը:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Բակալավրի կրթական ծրագրերում հետազոտություն իրականացնելու և ավարտական աշխատանք պատրաստելու համար հատկացված է 26 կրեդիտ: Մագիստրոսի կրթական ծրագրերում հետազոտական աշխատանքին հատկացված է 60 կրեդիտ: Խոսքը գնում է միայն որակավորման շնորհման աշխատանքների մասին: Ընթացիկ հետազոտական աշխատանքի բաղադրիչը բացակայում է: Բացի «Արվեստաբանություն» մասնագիտությունից, բոլոր մագիստրոսական թեզերը և ավարտական աշխատանքները ունեն գործնական-կիրառական, այլ ոչ թե հետազոտական ուղղվածություն:

Նկարագրված չեն մագիստրոսական թեզերի, որպես մագիստրոսական կրթական ծրագրերի գիտական հիմնական բաղկացուցիչի, թեմատիկայի ձևավորմանը և ընտրությանը ներկայացվող պահանջները:

Բակալավրի և մագիստրոսական ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչները նկարագրված չեն, բայց տրամադրված են մեծաքանակ կրեդիտներ: Օրինակ, առանց բովանդակային հստակեցման մագիստրոսական ՄԿԾ-ների ուսումնական պլաններում ուսումնառությանը տրամադրվող ընդհանուր 120 կրեդիտից հետազոտական աշխատանքներին հատկացված է 60 կրեդիտ (հետազոտական աշխատանք -32 կրեդիտ, մագիստրոսական թեզի և նախագծի պատրաստում-28 կրեդիտ): Մագիստրոսի հետազոտական կարողությունների ձևավորմանն ուղղված դասավարդման և ուսումնառության մեթոդները նույնպես հստակեցված չեն ՄԿԾ-ներում:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵԳՊԱ-ն ունի մշակված հետազոտական ուղղություններ, սակայն այդ ուղղությունները չեն արտացոլում բուհի մասնագիտական ուղղությունները, իսկ հետազոտական հետաքրքրությունների իրականացման ընդգրկուն ռազմավարության բացակայությունը թուլացնում է հետազոտական գործունեության զարգացումը: Ունենալով 70-ամյա պատմություն և գիտական որոշակի ներուժ, բուհը պետք է արդեն իսկ իրագործած լիներ հետազոտական որոշ ծրագրեր:

Բուհում ստեղծված հետոզոտական կենտրոնի ռեսուրսների ոչ բավարար լինելը խոչընդոտում է կանոնակարգով նախատեսված նպատակների իրականացմանը և հետազոտական գործունեության ծավալմանը:

Թույլ է բուհի և գիտական հաստատությունների միջև հետազոտությանն առնչվող կապը, որը հիմնականում կարող էր արտահայտվել համատեղ գիտական ծրագրերով:

Բուհի աշխատակիցների կողմից հրատարակվող հոդվածների և թեզիսների քիչ քանակը անհանգստացնող պետք է լինի բուհի համար, քանի որ այն ցույց է տալիս իրականացվող հետազոտական աշխատանքների ցածր ակտիվությունը:

Գովելի է, որ ԵԳՊԱ-ն մասնակցել է TEMPUS-ի VERITAS դրամաշնորհային ծրագրին: Սա կնպաստի հետագայում իրականացվող հետազոտությունների միջազգայնացմանը և արդյունքների միջազգային ճանաչմանը: Սակայն, բուհը դեռևս անելիքներ ունի հետազոտական աշխատանքների միջազգայնացման առումով, քանի որ ներկայումս միջազգային որևէ նշանակալի հետազոտական գործունեություն չի իրականացվում: Սա նվազեցնում է ՊԴ անձնակազմի շարժունությունը, փոքրացնում է օտարերկրյա բուհերի հետ համագործակցության շրջանակը:

Չնայած առկա որոշ աշխատանքներին, բակալավրիատում և մագիստրատուրայում ուսանողական հետազոտական աշխատանքները դեռևս չեն հանդիսանում ուսումնառության բաղկացուցիչ մասը, որը կարող է բացասաբար ազդել կրթական վերջնարդյունքների ձևավորման վրա:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հաշվի առնելով, որ ներկայումս բուհում առկա չէ հետազոտական ոլորտում իր հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող ընդգրկուն ռազմավարություն, բուհի կողմից տրամադրվող ռեսուրսները բավարար չեն հետազոտական գործունեություն իրականացնելու համար, թույլ է բուհի հետազոտական գործունեության միջազգայնացումը, ինչպես նաև հստակ չեն հետազոտության և ուսումնառության միջև եղած կապերը, փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը չի ապահովում հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. *Փորձագիտական խումբը ԵԳՊԱ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 6-ի պահանջներին գնահատում է* ***անբավարար:***

ՉԱՓԱՆԻՇ VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

ՓԱՍՏԵՐ

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

ԵԳՊԱ-ն իր գործունեությունն իրականացնում է Երևանի երկու մասնաշենքերում՝ 3511,1քմ և 2996.8քմ մակերեսներով, ինչպես նաև Գյումրու՝ 1618.9քմ և Դիլիջանի՝ 1297.2քմ մակերեսներով մասնաճյուղերում: Բուհն ունի անհրաժեշտ լսարաններ, սարքավորումներով հագեցած արվեստանոցներ, հատուկ կահավորված ժամանակակից լաբորատորիաներ: Բուհում կան տեղեկատվական ծառայություններ մատուցող և համակարգչային տեխնոլոգիաներով լսարաններ:

Նյութատեխնիկական հագեցվածության և կրթական միջավայրի բարելավումը ԵԳՊԱ-ի ռազմավարական խնդիրներից է, ինչը ամրագրված է Ակադեմիայի 2012-2016թթ. ՌԾ-ի նպատակ 1-ի 7-րդ խնդրում և 2017-2021թթ. ՌԾ-ի նպատակ 2-ի 2-րդ խնդրում: Բուհի կրթական ծրագրերի իրականացումը պահանջում է դրանց յուրահատկություններին համապատասխանող միջավայր, որն իր մեջ ներառում է ժամանակակից սարքավորումներով հագեցված լաբորատորիաներ, արվեստանոցներ, արհեստանոցներ, գրադարան և այլն: ՄԿԾ-երի հիմնական մասը կիրառական բնույթի են և պահանջում են հատուկ արվեստանոցային և լաբորատոր ապահովվածություն, որն ընդհանուր առմամբ առկա է: ՄԿԾ-ներում պահանջվող ռեսուրսները նկարագրված չեն:

Բուհն ունի գրադարան, որը մասամբ ապահովված է անհրաժեշտ գրականությամբ: Չնայած դրան, գրադարանն ունի գրականության պակաս, հատկապես համեմատաբար վերջերս ներդրված նոր մասնագիտությունների համար: Առկա չէ նաև էլեկտրոնային գրադարան: Բուհի կայքը բավարար տեղեկություն չի պարունակում գրադարանի վերաբերյալ: Գրադարանային ռեսուրսները բավարարում են հարցված ուսանողների միայն 5%-ին: Գրադարանից դասախոսների շատ քիչ մասն է օգտվում:

Կրթական միջավայրի գնահատման համար բուհն անցկացրել է հարցումներ ուսանողների շրջանում և ստացված տվյալների հիման վրա բարեփոխել է որոշ պայմաններ: Հարցումների արդյունքում վերազինվել են լաբորատորիաներ: Ուսումնառողների և դասավանդողների մոտ 70%-ն է դեռևս բավարարված առկա ռեսուրսներից:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ բուհում գործում է ցուցասրահ, որտեղ ուսանողներին և դասախոսներին հնարավորություն է ընձեռնվում ցուցադրվել իրենց աշխատանքները:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Բուհի բյուջեի նախահաշիվը, որտեղ արտացոլված են ֆինանսական հատկացումները կայքում հրապարակված է՝ համաձայն ընդունված կարգի:

Բուհի ֆինանսական ռեսուրսների 35.7%-ը ձևավորվում է ուսանողական վարձավճարներից, մոտ 40.4%-ը՝ պետբյուջեի հատկացումներից, մոտ 23.9%-ը՝ այլ աղբյուրներից:

Բուհը ֆինանսական միջոցները բաշխվում են տարբեր ստորաբաժանումների կարիքներից ելնելով: Ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականության տեսակետից բուհում առկա է տարեկան ֆինանսական պլանավորում և հաշվետվողականություն:

Բուհի դրամական միջոցների ծախսերը կատարվում են ըստ հետևյալ ոլորտների. աշխատավարձ՝ մոտ 82%, կրթաթոշակներ՝ մոտ 3.3 %, գործուղման ծախսեր՝ մոտ 0.7% և այլն: Բուհի ներկայացուցիչները համարում են, որ անբավարար են գիտահետազոտական աշխատանքներին ուղղված ֆինանսական միջոցները: Ըստ ռազմավարական նպատակների բաշխումները հիմնականում ներկայացված չեն:

Ֆինանսական ռեսուրսների օգտագործման մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման մեխանիզմներ չեն կիրառվում:

Բուհի ֆինասական ռեսուրսներում ներառվում են արտաքին զգալի աղբյուրներ՝ տարբեր դրամաշնորհային ծրագրերից: ԵԳՊԱ-ն զգալի ներդրումներ է անում ուսումնական լաբորատորիաները նոր սարքավորումներով ապահովելու ուղղությամբ, որի համար հաճախ օգտագործում է արտաքին միջազգային աղբյուրներից ստացվող ֆինանսավորումը:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Ընդհանուր առմամբ առանձին մասնագիտական կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող ֆինասական ռեսուրսների բաշխման գործուն համակարգ առկա չէ: Սակայն կան դրական օրինակներ: Մասնավորապես, միջազգային ծրագրերով կոնկրետ ՄԿԾ-ների համար լաբորատորիաներ են կահավորվել:

Բուհում գործում է ֆինանսական ռեսուրսների բաշխմանը վերաբերող ընթացակարգ՝ ըստ առանջնահերթությունների և կարիքներից ելնելով: Բյուջեի նախագիծը կազմվում է նախորդ տարիների փաստացի կատարողականի հիման վրա՝ հաշվի առնելլով բուհի զարգացմանն ուղղված քայլերը, նախօրոք հաշվված եկամուտները, կատարվելիք ընդհանուր ծախսերը, ինչպես նաև բուհի ստորաբաժանումների կարիքներից բխող հայտերը:

Բյուջեի նախագիծը նախ և առաջ քննարկվում է բուհի ԳԽ-ում և հավանության արժանանալու դեպքում՝ ներկայացվում բուհի Խորհրդի հաստատմանը:

Առկա է ստորաբաժանումների տարեկան պլանավորման, մշտադիտարկման բարելավման կարգ, որով ՄԿԾ-ների նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխումը չի կանոնակարգվում:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Կարելի է փաստել, որ բուհի ռեսուրսային բազան հնարավորություն է տալիս իրականացնել բուհի կրթական ծրագրերը: Որպես դրական փաստ կարելի է նշել որոշ արվեստանոցներում սարքավորումների արդիականացումը, սակայն կան անելիքներ ռեսուրսային բազայի հարստացման ուղղությամբ, մասնավորապես՝ գրադարանը և արվեստանոցները նորագույն սարքավարումներով վերազինելու հետ կապված: Ուսանողները իրենք են ձեռք բերում նյութեր, և միայն որոշ դեպքերում է բուհը տրամադրում աջակցություն: Օբյեկտիվ խնդիրներ նշվեցին ինչպես ուսանողների, այնպես էլ ուսանողների կողմից կապված համապատասխան բնորդներով ապահովվածության հետ:

Շատ քիչ ռեսուրսներ են հատկացված հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար:

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Բուհում մշակված է փաստաթղթաշրջանառության սխեմա, որը կանոնակարգում է բուհի մուտքային, ներքին և ելքային փաստաթղթերի շարժը: Մշակված է «ԵԳՊԱ արխիվի կանոնակարգ», որով համակարգվում է փաստաթղթերի պահպանումը: Բուհը կիրառում է ուսանողների անձնական և ուսումնական գործընթացին վերաբերող տվյալների պահպանման ու կառավարման էլեկտրոնային համակարգ, որը դեռևս զարգացման փուլում է:

Համաձայն ինքնավերլուծության փաստաթղթաշրջանառության տարբեր համակարգերը կապակցված չեն, այսինքն չեն գործում մեկ ընդհանուր համակարգի մեջ:

ԵԳՊԱ կայքը որոշ չափով ապահովում է տեղեկատվության հասանելիություն՝ հաշվետվությունների, կանոնակարգերի և ՄԿԾ-ների վերաբերյալ:

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Բուհում գործում է բուժկետ՝ առաջին բուժօգնության համար: Բուժկետը ապահովված է առաջին բուժօգնության համար անհրաժեշտ դեղորայքով, որը պարբերաբար թարմացվում է: Կազմակերպվում են պարտադիր բուժզննումներ նաև արտաքին ռեսուրսներով:

Անվտանգության նկատառումներով բուհում կա պարետային ստորաբաժանում և անցակետ: Ունեն հակահրդեհային միջոցներ:

Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար առավել արդյունավետ կրթություն ապահովելու, ինչպես նաև նրանց տարբեր գործընթացներում ներգրավելու համար, բուհը նախաձեռնել է ERASMUS PLUS-ի INCLUSION ծրագիրը: Սակայն տարածքները դեռևս հարմարեցված չեն հենաշարժողական համակարգի խնդիրներ ունեցող ուսանողների համար, ինչը խոչնդոտում է նրանց կրթություն ստանալուն:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Ռեսուրսների կիրառելիությունը, հասանելիությունը և արդյունավետությունը գնահատելու նպատակով բուհի Որակի ապահովման կենտրոնը ուսանողների և դասավանդողների շրջանում հարցումներ է անցկացրել, որոնք բացահայտել են ռեսուրսների կիրառելիության և հասանելիության խնդիրներ: Հարցումների վերլուծությունների արդյունքնում, վերազինվել են որոշ արվեստանոցներ:

Պետք է նշել, որ կատարված հարցումները չեն ընդգրկում տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության ամբողջական գնահատումը:

Իրականացված հարցումներից բացի այլ վերլուծական մեծանիզմներ չեն կիրառվում, օրինակ՝ պարբերական մշտադիտարկում և այլն: Փորձագիտական խումբը չնկատեց բուհի այլ ներքին շահակցիների (ադմինիստրատիվ և սպասարկող անձնակազմ) խմբերի շրջանում կատարված հարցումներ՝ տրամադրվող ռեսուրսների վերաբերյալ:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Փորձագիտական խումբը գտնում է, որ ընդհանուր առմամբ բուհի ռեսուրսները ապահովում են կրթական ծրագրերի իրականացումը և բուհի կայուն գործունեությունը Միաժամանակ նշում է, որ չնայած առկա կրթական ռեսուրսներին, այնուամենայնիվ, արվեստանոցներն ու լաբորատորիաները տեխնիկական միջոցներով վերահագեցման անհրաժեշտություն կա, ինչի մասին փաստեցին նաև փորձագիտական խմբի հետ հանդիպման մասնակիցները: Բուհում կատարված հարցումները ցույց են տալիս, որ ուսանողներն և դասախոսները դեռևս բավարարված չեն գրադարանային ռեսուրսներից, որը մտահոգիչ է ՄԿԾ-ների իրականացման տեսանկյունից:

Ցուցասրահի առկայությունը նպաստում է կրթական ծրագրերի իրականացմանը, քանի որ հնարավորություն է ստեղծվում ուսանողներին ցուցադրել կրթական վերջնարդյունները:

Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը դրական է համարում, որ դրամաշնորհային ծրագրերը համալրում են բուհի ֆինանսական միջոցները: Ֆինանսական ներհոսքի աղբյուրների բազմազանեցման և արտաքին աղբյուրների մասնաբաժնի ավելացման ուղղությամբ հետագա քայլերը կամրապնդեն բուհի ֆինանսական կայունությունը:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ բուհում կա ֆինանսական միջոցների բաշխման ձևավորված մեխանիզմ: Բուհի տարեկան բյուջեում նախատեսվում են որոշակի ծախսեր, որոնք ուղղված են բուհի նպատակների իրականացմանը, սակայն ծախսերը մանրամասնեցված չեն ըստ ռազմավարական նպատակների և կրթական ծրագրերի, որն առավել հասցեական կդարձներ կատարվող ֆինանսական ներդրումները: Ֆինանսական միջոցների պլանավորման և բաշխման գործող քաղաքականության արդյունավետության գնահատման մեխանիզմներ դեռևս առկա չեն, ինչը կարող է իջեցնել բուհի կողմից ֆինանսական միջոցների բաշխման արդյունավետությունը:

ԵԳՊԱ-ն 2017 թվականից պլանավորել է ներդնել փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային կառավարման համակարգ, քանի որ առկա համակարգերը կապակցված չեն միմյանց: Նոր համակարգի ներդրումը կնպաստի փաստաթղթաշրջանառության գործընթացի առավել արդյունավետ կազմակերպմանը:

Բուհում կիրառվում է կրթական միջավայրի գնահատման հարցումների մեխանիզմը: Այս հանգամանքը նպաստավոր կարող է լինել կարիքների վերհանման և կրթական միջավայրի հետագա կատարելագործման տեսակետից:

Բյուջեում աշխատավարձային ֆոնդի մեծ (82%) մասնաբաժինը, կարող է սահմանափակել այլ առանցքային ոլորտներում ներդրումներ կատարելու հնարավորությունը (օր.՝ հետազոտություն, գրադարան, միջազգայնացում) և թուլացնել ռազմավարական ծրագրի իրականացման արդյունավետությունը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հաշվի առնելով, որ վերջին տարիներին ԵԳՊԱ-ն ջանքեր է ներդնում ռեսուրսների բարելավման և հարստացման ուղղությամբ՝ ներգրավելով արտաքին աղբյուրներ, վերազինվել են որոշ լաբորատորիաներ, առկա են կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ պայմաններ, ստեղծված է ապահով և անվտանգ միջավայր ուսումնական գործընթացի կազմակերպման համար, փաստաթղթավորման համակարգի արդյունավետության բարելավման նպատակով պլանավորվել է ներդնել էլեկտրոնային կառավարման համակարգ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԳՊԱ-ն ունի ռեսուրսներ՝ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների իրականացման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Փորձագիտական խումբը ԵԳՊԱ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

ՉԱՓԱՆԻՇ VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

ՓԱՍՏԵՐ

8.1. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

Բուհում առկա է ներքին հաշվետվողականության համակարգ, ըստ որի քննարկվող հարցերն անցնում են ամբիոն, ֆակուլտի խորհուրդ, պրոռեկտոր, գիտական խորհուրդ, ռեկտոր, բուհի խորհուրդ ուղին:

Ռեկտորը տարեկան հաշվետվությունը ներկայացնում է բուհի կառավարման խորհրդին, ԿԳՆ-ին՝ կրթական և գիտական գործունեության վերաբերյալ, որը հրապարակվում է նաև ԵԳՊԱ-ի պաշտոնական կայքէջում: Սա ևս դրական մեխանիզմ է հաշվետվողականության և թափանցիկության ապահովման տեսակետից:

ԵԳՊԱ-ի որոշ ստորաբաժանումներ իրականացրած կամ իրականացվող աշխատանքների և միջոցառումների մասին տեղեկատվությունը հրապարակում են ԵԳՊԱ-ի կայքէջում և ֆեյսբուքյան էջում:

Բուհի կողմից մշակվել է հրապարակայնության և տեղեկատվության տարածման համակարգ, սակայն այն չի ներառում գործառույթների մանրամասն նկարագրություններ:

8.2. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:

Բուհի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, կարգերը, ընթացակարգերը, ձեռնարկները և այլ համակարգող փաստաթղթեր հրապարակվում են պաշտոնական կայքէջում:

Բուհը հասարակությանը հաշվետվողականության ձև է համարում նաև մեծ թվով ուսանողական և դասախոսական աշխատանքների ցուցադրությունները, որոնք կայանում են և ԵԳՊԱ-ի ցուցասրահում և ՀՀ նկարիչների տան ցուցասրահում: Հասարակությանը հաշվետվողականության ձև է բակալավրական և մագիստրոսական ավարտական աշխատանքների բաց պաշտպանության կազմակերպումը, որին ներկա են լինում մեծ թվով ունկնդիրներ, հրավիրվում են գործատուներ: Պաշտպանության վերաբերյալ նյութերը տեղադրվում են բուհի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում:

ԵԳՊԱ-ն հրատարակել է ձեռնարկ, որում ներկայացված է բուհի գործունեությունը և իրականացվող մասնագիտություններն իրենց համառոտ նկարագրերով:

Այցի ժամանակ փորձագիտական խումբը պարզեց, որ ԵԳՊԱ-ն արվեստի երկու բուհերի հետ համատեղ (Կոմիտասի անվան պետական կոնսերվատերիա և Թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ) կազմակերպել է մի շարք միջոցառումներ, որոնց մասնակցել են մեծ թվով ուսանողներ: Միջոցառումները միտված են եղել ներկայացնելու և քարոզելու արվեստի զարգացումը Հայաստանում: Բուհը ակտիվորեն մասնակցել է մի շարք այլ ազգային և հասարակական բնույթի հնչեղ միջոցառումների, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը արտացոլված չէր ինքնավերլուծության մեջ:

8.3. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Հասարակության կողմից ԵԳՊԱ-ի գործունեության վերաբերյալ հետադարձ կապի ապահովումը հիմնականում իրականացվում է վեբ կայքի և ֆեյսբուքյան էջի միջոցով: Հասարակության կողմից ստացվող արձագանքները հավաքագրվում են հասարակայնության հետ կապերի պատասխանատուի կողմից և ներկայացվում գործունեության համար պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարներին:

ԵԳՊԱ այցի ժամանակ փորձագիտական խումբը պարզեց, որ ուսանողների և դասախոսների անհատական և խմբային ցուցահանդեսների վերաբերյալ այցելուները գրառումներ են կատարում համապատասխան մատյաններում և հայտնում իրենց կարծիքը ցուցադրությունների վերաբերյալ: Բացի այդ արտասահմանյան ուսանողներին ներգրավելու համար, շարունակական կապ է ապահովվում Հայաստանում օտարերկրյա պետությունների

դեսպանատների հետ:

8.4. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

ԵԳՊԱ-ն հասարակությանը լրացուցիչ կրթական ծառայություններ է մատուցում վճարովի հիմունքներով նախապատրաստական և այլ դասընթացների իրականացման միջոցով:

Այցի ժամանակ փորձագիտական խումբը պարզեց, որ ԵԳՊԱ-ի ուսանողները պարբերաբար մասնակցում են Հայաստանում տեղի ունեցող հնագիտական պեղումներին և իրենց ներդրումն են ունեում մշակութային արժեքների պահպանման գործում: Ինչպես նաև ԵԳՊԱ-ի ուսանողները մասնակցում են Երևանի շինությունների դեկորատիվ հարդարման աշխատանքներին, մասնավորապես խճանկարներով ձևավորմանը: Այս աշխատանքների վերաբերյալ իրենց դրական կարծիքն ու ոգևորությունն են հայտնել նաև բուհի ուսանողները:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ: Բուհում առկա հաշվետվողականության հստակ մեխանիզմը նպաստում է հաշվետվողականության որակի բարձրացմանը, թափանցիկ է դարձնում բուհի գործունեությունը:

Բուհում գործում են որոշ մեխանիզմներ, որոնցով ապահովվում է ընթացակարգերի և գործընթացների թափանցիկությունը (կայք էջ, ֆեյսբուքյան էջ, ձեռնարկներ և այլն): Այդ տեսակետից բուհը պետք է առավելագույնս նպաստի տեղեկատվության տարածմանը արտաքին և ներքին շահակիցների շրջանում: Թույլ կողմ կարելի է համարել այն, որ կայքէջը դեռևս չի ապահովում մանրամասն տեղեկատվություն, որի մասին բազմիցս նշվել է փորձագիտական խմբի հանդիպումների ժամանակ ակադեմիայի աշխատակազմի և ուսանողության ներկայացուցիչների կողմից (չնայած այն բանին, որ բուհում գործում են համապատասխան մասնագետներ), հասարակությունը չի օգտվում բուհի պաշտոնական կայքէջում հարցադրումներ կատարելու հնարավորությունից:

Դրական համարելով այն, որ առկա են հասարակությանը մատուցվող ծառայություններ (աշխատանք դիմորդների հետ, ուսանողների և դասախոսների աշխատանքների ցուցահանդեսներ, հնագիտական պեղումներին և Երևանի ձևավորման աշխատանքներին մասնակցություն, հասարակական միջոցառումներ), պետք է նշել, որ բուհը կարիք ունի մշակել մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան գնահատել և համակարգել մատուցվող ծառայությունները:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հաշվի առնելով, որ բուհում առկա է հաշվետվողականության համակարգ, որը հիմնականում վեր է հանում բուհում առկա խնդիրները, հասարակությանը տրամադրվող տեղեկատվությունը ընդհանուր առմամբ հասանելի է, առկա են հասարակությանը գիտելիքի փոխանցման մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը բավարար չափով հաշվետու է հասրակությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.. Փորձագիտական խումբը ԵԳՊԱ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին **գնահատում է բավարար:**

ՉԱՓԱՆԻՇ IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

ՓԱՍՏԵՐ

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

Բուհի 2012-2016թթ. և 2017-2021թթ. ռազմավարական ծրագրերում ամրագրված է միջազգայնացման նպատակները և խնդիրները, որոնք անդրադառնում են հաստատության գործունեության կարևորագույն ոլորտներին: 2016թ. մշակվել է <<Միջազգայնացման ռազմավարություն>>, որը անդրադառնում է ԵԳՊԱ-ի արտաքին կապերի բաժնի գործունեության բարելավմանը, արտաքին կապերի զարգացմանը, ուսանողների և դասախոսների շարժունության և կրթական ծրագրերի միջազգայնացման խթանմանը: Վերջին երեք տարիների ընթացքում միջազգայնացմանը ուղղությամբ բուհը իրականացրել է մի շարք աշխատանքներ՝

- Կրթական ծրագրերի մշակման և վերանայման ձեռնարկի մշակում՝ TEMPUS ALIGN դրամաշնոհային ծրագրի շրջանակներում, որը ապահովում է ԵԳՊԱ կրթական ծրագրերի մշակման քաղաքականության համապատասխանությունը ազգային և միջազգային պահանջներին:
- 4 բակալավրի և 4 մագիստրոսի կրթական ծրագրերի վերանայում՝ նոր քաղաքականության համաձայն:
- Ուսանողների գնահատման համակարգի բարելավում՝ ուսումնասիրելով օտարերկրյա հաստատությունների փորձը և այդպիսով ապահովելով համակարգի միջազգային մոտեցումներին համահունչ լինելը:
- TEMPUS PICASA դրամաշնորհային ծրագրի շրջանակներում արտաքին կապերի բաժնի գործառույթների վերանայում, միջազգայնացման ռազմավարության մշակում և դրա որակի ապահովման քաղաքականության հստակեցում և այլն՝ հիմնվելով օտարերկրյա հաստատությունների լավագույն փորձի ուսումնասիրությունների վրա և այլն:[9]

Համաձայն բուհի ինքնավերլուծության, ԵԳՊԱ-ն նաև կազմակերպել է բազմաթիվ միջազգային մշակութային միջոցառումներ, որտեղ ներգրավվել են ներքին և արտաքին շահակիցներ:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

Բուհի արտաքին կապերի և միջազգայմացման ապահովման համար գործում է արտաքին կապերի բաժին, իսկ բուհի տարբեր ստորաբաժանումները իրենց գործառույթների շրջանակենրում մասնակցում են միջազգային ծրագրերի իրականացմանը:

Արտաքին կապերի բաժնի գործունեությունը բխում է բուհի ռազմավարական ծրագրի նպատակներից: Բաժինն իրականացնում է մի շարք միջազգային նախագծերի համակարգում: Կառույցի կազմում բացի ղեկավարից, կա երկու աշխատակից: Արտաքին կապերի բաժինը աշխատանքը կազմակերպվում է 2016թ. հաստատված իր կանոնակարգով: Համաձայն ինքնավերլուծության՝ ԵԳՊԱ-ն վերջին երեք տարիների ընթացքում իրականացրել է հետևյալ աշխատանքները՝

- Վերանայվել են օտարերկրյա ուսումնական հաստատությունների հետ գործող պայմանագրերը և ձեռք են բերվել նոր համագործակցության պայմանագրեր:
- Մշակվել է ուսանողների շարժունության իրականացման կարգը՝ դառնալով ավելի հստակ և ապահովելով արդյունքների ճանաչման կանոնակարգված գործընթաց:

[9] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

• Բարելավվել է ուսանողների շարժունության եռակողմ պայմանագիրը՝ ներառելով ԵԳՊԱ-ին, ուսանողին և ընդունող հաստատությանը վերաբերող հիմնական պահանջները և պարտականությունները:

• Կազմակերպվել է ավելի քան 30 միջոցառում՝ արտաքին գործընկերների մասնակցությամբ:

• Հստակեցվել է օտարերկրյա ուսանողների ընդունելության կարգը: [10]

Փորձագիտական խմբի հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ ԵԳՊԱ ամբիոնները թեև ներգրավված են միջազգային ծրագրերում, սակայն ակտիվ միջազգային գործունեություն չեն ծավալում:

ԵԳՊԱ միջազգային գործունեությունը հիմնված է մի շարք դրամաշնորհային ծրագրերի և առանձին նախաձեռնությունների վրա:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

Տեղական հաստատությունների հետ ակադեմիայի համագործակցությունը իրականացվում է հիմնականում ուսանողների պրակտիկայի կազմակերպման համար: Պրակտիկայի կազմակերպման նպատակով բուհը կնքել է պայմանագրեր թվով 26 կազմակերպությունների հետ: Բուհը անդամակցել է և շարունակում է անդամակցել TEMPUS նախագծի GOVERN, ALIGN, VERITAS, PICASA, ESPAQ, HEN-GEAR և ERASMUS PLUS նախագծի INCLUSION ու C3QA դրամաշնորհային ծրագրերին: ERASMUS PLUS նախագծի շրջանակներում 9 համալսարանական կոնցորսիումի անդամ է:

Բուհն ունի 20 երկկողմանի համագործակցության պայմանագրեր արտասահմանյան ուսումնական հաստատությունների հետ, սակայն դրանցից ոչ բոլորն են գործում: Դրա պատճառը բուհը համարում է ֆինանսական միջոցների սղությունը և օտար լեզուներին տիրապետման ցածր մակարդակը: Արտասահմանյան ուսումնական հաստատությունների հետ համագործակցության 6 պայմանագրերի շրջանակներում ուսանողների փոխանակման առումով ներկայացված է միայն ուսանողների արտահոսքի վերաբերյալ տվյալներ, որը հուշում է միակողմանի համագործակցության մասին: Ինքնավերլուծության մեջ նշվում է արտասահմանյան բուհեր մեկնած 31 արտագնա և Մոսկվայի դիզայնի ազգային ինստիտուտից և Սանկտ Պետերբուրգի Շտիգլիցի անվան պետական ակադեմիայից փոխանակման ծրագրերով մեկական ներգնա ուսանողի մասին: [11]

Դասախոսների ակադեմիական շարժունություն ԵԳՊԱ-ն չի իրականացնում:

Տեղական մակարդակում առկա են ակտիվ կապեր տարբեր համալսարանների հետ ՏԵՄՊՈՒՍ ծրագրերի շրջանակներում:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

ԵԳՊԱ-ի բակալավրական ՄԿԾ-ներում օտար լեզուները որպես պարտադիր դասընթաց ընգրկված չեն: Մագիստրոսական ՄԿԾ-ներում օտար լեզուները ընդգրկված են որպես ընտրովի դասընթաց: Սակայն բուհը կազմակերպում է անվճար ֆակուլտատիվ դասընթացներ անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն և ռուսերեն: Օտար լեզվի մասնագետների հետ պայմանագրեր են կնքվում և ժամանակացույց է կազմվում:

Հայերենին չտիրապետող օտարերկրյա ուսանողների համար կազմակերպվում են հայերենի դասընթացներ:

---

[10] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

[11] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

Օտարերկրյա ուսանողների համար օտար լեզվով դասավանդող դասախոսների թիվը դեռևս սակավ է: Բացակայում են նաև օտար լեզուներով դասավանդվող ՄԿԾ-ները և առանձին առարկաները:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԵԳՊԱ-ն վերջին տարիներին ներգրավվել է մի շարք միջազգային ծրագրերում, որոնք որոշակի ազդեցությունն ունեն ուսումնական գործընթացի որակի բարելավման վրա: Երբ խոսքը վերաբերում է միջազգայնացման և համագործակցության խթանմանը, ԵԳՊԱ-ն քաջատեղյակ է գոյություն ունեցող խնդիրներին՝ դասախոսների շարժունության բացակայություն, ուսանողների շարժունության ցածր մակարդակ, որոնց պատճառը ֆինանսական ռեսուրսների պակասն է, անգլերեն լեզվի իմացության ցածր մակարդակը:

ՄՈՒՀ-ի կազմակերպչական կառուցվածքում գործող արտաքին կապերի բաժինը իր ռեսուրսներով հիմք է ստեղծում միջազգայնացման և արտաքին կապերի հետագա ակտիվացման համար: Միաժամանակ, արտաքին կապերի բաժնի առավել ակտիվ գործունեությունը կնպաստի ուսանողների և դասախոսների ներգրավմանը միջազգային տարբեր ծրագրերում, արտերկրում ուսումը շարունակելու, հետազոտություն իրականացնելու և/կամ այլ գործունեություն ծավալելու համար:

Փորձագիտական խումբը գտնում է, որ բուհի արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականության ու ընթացակարգերի լիարժեք կիրառումը կբարձրացնի բուհի միջազգայնացման գործընթացի արդյունավետությունը և կակտիվացնի դասախոսների և ուսանողների շարժունությունը:

Բուհի որոշ դասախոսների և ուսանողների մի մասի օտար լեզուներին տիրապետելու փաստն ապահովում է արտաքին կապերի ակտիվացման հեռանկարներ, սակայն բուհը, գիտակցելով, որ օտար լեզվի մակարդակը կարող է դեռևս անբավարար լինել մասնագիտական դասընթացների վարման և կրթական ծրագրերի շրջանակներում ուսանողների փոխանակման համար, անցկացնում է օտար լեզվի լրացուցիչ դասընթացներ, որոնք փորձագիտական խմբի կարծիքով նպաստող գործոն կարող են հանդիսանալ բուհի միջազգայնացման համար: Օտար լեզուների պարտադիր ներգրավումը ՄԿԾ-ներում նույնպես կնպաստի ուսանողների շրջանում անգլերեն լեզվի իմացության մակարդակի բարձրացման:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հաշվի առնելով, որ ԵԳՊԱ-ում գործում է արտաքին կապերի բաժին, որն իրականացնում է միջազգայնացմանն ուղղված աշխատանքներ, մշակված են արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր, ակադեմիան ներգրավված է մի շարք միջազգային ծրագրերում, որի շրջանակներում մշակվել են ՄՈՒՀ-ի փաստաթղթային հենքը, ՄՈՒՀ-ը քայլեր է ձեռնարկում ակտիվացնելու ուսանողների և դասախոսների արտագնա և ներգնա շարժունութունը, քայլեր է ձեռնարկում դասախոսների և ուսանողների շրջանում անգլերեն լեզվի իմացության մակարդակի բարձրացման ուղղությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԳՊԱ-ն բավարարում է չափանիշի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Փորձագիտական խումբը ԵԳՊԱ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին **գնահատում է բավարար:**

ՉԱՓԱՆԻՇ X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

ՓԱՍՏԵՐ

10.1. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Բուհի որակի ապահովման ընդհանուր քաղաքականությունը սահմանված է մի շարք փաստաթղթերում, ինչպես օրինակ «ԵԳՊԱ որակի ապահովման ձեռնարկ», «Ստորաբաժանումների տարեկան գործունեության պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման կարգ», «ՄԿԾ-ների մշակման և վերանայման ձեռնարկ» և այլն:

Բուհի որակի ապահովման գործընթացների հիմքում ընկած է ԵԳՊԱ որակի կառավարման համակարգը:

Որակի ապահովման կենտրոնի հիմնադրումից ի վեր մշակվել են բուհի գործունեության ոլորտները գնահատող բազմաթիվ փաստաթղթեր /ԵԳՊԱ ստորաբաժանումների տարեկան գործունեության պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման կարգ, ԵԳՊԱ ներքին կարգապահական կանոնակարգ, ՄԿԾ-ների մշակման և վերանայման ձեռնարկ/ և մեխանիզմներ:

10.2. Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

2011թ.-ին բուհում ստեղծվել է Որակի ապահովման և ինքնագնահատման բաժին (ինքնավերլուծության մեջ այն կոչվում է կենտրոն), որը միտված է աջակցելու հաստատության ՈԱ գործընթացներին: Կենտրոնի աշխատանքները կանոնակարգվում են ռեկտորի կողմից հաստատված կանոնակարգով, որտեղ սահմանված են կենտրոնի գործառույթները: ԵԳՊԱ ՈԱ կենտրոնը կառուցվածքային անկախ ստորաբաժանում է և ուղղակիորեն հաշվետու է ԵԳՊԱ ռեկտորին: Կենտրոնն ունի տնօրեն և մասնագետ-վերլուծաբան: ՈԱ կենտրոնն ունի կահավորված գրասենյակ, աշխատաժողովների դահլիճ: ՈԱ կենտրոնի տարեկան պլանին կցվում է նաև ՈԱ գործընթացների համար անհրաժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսների ցանկը: Տարեկան պլանի հաստատումից հետո, պլանին կից ռեսուրսների ցանկի հիման վրա հաշվարկվում է ՈԱ գործընթացներին հատկացվող բյուջեն: TEMPUS-ի DIUSAS «Հաստատությունների ինքնագնահատման համակարգերի մշակում և ներդնում» և ՀԲ «Կրթության որակ և համապատասխանություն» դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում որոշակի չափով ապահովվել է ՈԱ կենտրոնի տեխնիկական հագեցվածությունը: Որակի կենտրոնի նյութական և ֆինանսական ռեսուրսների պլանավորումը կարգավորվում է «ԵԳՊԱ ստորաբաժանումների տարեկան գործունեության պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման կարգ»-ով:

Որակի ներքին ապահովման համակարգում ներդրված են ինչպես միջազգային ծրագրերի, այնպես էլ բուհի կողմից տրամադրված մարդկային, նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ:

Ֆակուլտետներում և ամբիոններում չկան որակի պատասխանատուներ:

Փորձագիտական այցի ընթացքում նկատվեց որակի ապահովման գործառույթների վերաբերյալ բուհի աշխատակիցների տեղեկացվածության և փորձի պակաս:

10.3. Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

Համաձայն ԵԳՊԱ որակի ներքին ապահովման ուղեցույցի, ներքին և արտաքին շահակիցները նույնպես պետք է մասնակցեն ՈԱ գործընթացներին: Ներքին շահակիցները

մասնակցում են ՈԱ բաժնի կողմից կազմակերպվող բոլոր հարցումներին, իսկ ՄԿԾ-երի արդյունավետությունը գնահատվում է շրջանավարտների և գործատուների շրջանում կատարվող հարցումների հիման վրա:

Բուհը կարևորում է ներքին և արտաքին շահակիցների տեղեկացվածությունն ու ներգրավվածությունն որակի ապահովման գործընթացներում:

Հարցումներից բացի ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության մեխանիզմներ և օրինակներ առկա չեն:

Բուհը ներքին շահակիցների, մասնավորապես՝ ուսանողների ներգրավվածությունը ԵԳՊԱ ՈԱ գործընթացներին ապահովելու նպատակով, ստեղծել է «Ուսանողական համայնք» (2013թ. դեկտեմբեր): «Ուսանողական համայնքը» որակի ապահովման գործընթացներում իրականացրել է որոշ հարցումներ:

Ուսանողները մասնակցություն են ունեցել նաև ինքնավերլուծության գործընթացին: Ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբում ներգարավված է եղել ուսանողական խորհրդի նախագահը:

10.4. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

ԵԳՊ-ն, ՏԵՄՊՈՒՍ-ի DIUSAS ծրագրի շրջանակներում, հնարավորություն է ունեցել ծանոթանալ որակի ապահովման եվրոպական լավագույն փորձին: ՀԲ «Կրթության որակ և համապատասխանություն» դրամաշնորհային ծրագիրը նույնպես նպաստել է բուհի որակի ապահովման գործընթացների և կառավարման համակարգի բարելավմանը:

ՈԱ բաժնի գործունեությունը ներկայիս փուլում ուղղված է բուհում կատարվող որակի գործընթացների պլանավորմանը և գործողությունների իրականացմանը: ԵԳՊԱ հիմնական գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլը դեռ փակված չէ, մասնավորապես ՄԿԾ-ների մշակում, հետազոտական գործունեություն, միջազգայնացում, դասախոսական կազմի մասնագիտական առաջընթաց և այլն:

Որակի ներքին ապահովման համակարգում վերջին տարիների ընթացքում կատարված են որոշ բարեփոխումներ, սակայն համակարգի պարբերաբար վերանայման քաղաքականություն դեռևս չի կիրառվում: Մասնավորապես՝ առկա չէ համակարգի վերանայման անհրաժեշտությունը, պլանավորվող փոփոխությունները և ինչքանով այդ փոփոխությունները կնպաստեն կրթական ծրագրերի բարելավմանը, ուսանողների բավարարվածության աճին, նրանց ներգրավվածությանը հետազոտական աշխատանքներում և այլն:

10.5. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Մշակվել են բազմաթիվ կանոնակարգեր և այլ փաստաթղթեր բուհի որակի ապահովման համակարգը կանոնակարգելու համար, ինչպես օրինակ ԵԳՊԱ-ի ռազմավարական ծրագրի նախագծման և մշակման ուղենիշերը, ԵԳՊԱ ստորաբաժանումների տարեկան գործունեության պլանավորման, իրականացման, մշտադիտարկման և բարելավման կարգը, ԵԳՊԱ-ում մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և վերանայման ձեռնարկը, ուսանողի ձեռնարկը, ՈԱ ուղեցույցը և այլն:

Արտաքին գնահատման գործընթացի կազմակերպման նպատակով իրականացվել են որոշակի աշխատանքներ (հարցումներ, ինքնավերլուծություն): Ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատման ուղղությամբ որոշ քայլեր իրականացվել են դրամաշնորհային ծրագրերի միջոցով:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Գործունեության թափանցիկությունը ապահովող հիմնական միջավայրը բուհի կայքն է, որը բարելավման կարիք ունի և մանրամասն տեղեկատվություն չի պարունակում կրթական ծրագրերի և բուհի որակի ապահովման գործառույթների և իրականացվող գործընթացների արդյունքների որակի վերաբերյալ:

Բուհում իրականացվող միջոցառումները նույնպես նպաստում են գործունեության թափանցիկությանը (ցուցադրություններ, քննարկումներ, սեմինարներ, վարպետաց դասեր և այլ):

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Վերջին տարիների ընթացքում բուհի որակի ապահովման համակարգի ներդրումն ու զարգացումը որոշակի նպաստավոր պայմաններ են ստեղծել որակի մշակույթի ձևավորման համար: Սակայն որակի մշակույթը դեռևս չի տարածվել ամբողջ ակադեմիայում:

Բուհի որակի ապահովման կենտրոնի գործունեությունը և մշակված բազմաթիվ կանոնակարգերը ընդհանուր առմամբ հիմք են հանդիսանում որակի ապահովման գործառույթների իրականացման համար, սակայն առկա է մշակված փաստաթղթերի օպտիմալացման և դրանց գործարկման խնդիր:

Բուհի դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներին ապահովվում է հիմնականում հարցումների և սակավաթիվ միջոցառումների միջոցով: Առավել հասցեական և արդյունավետ գործունեություն ապահովելու նպատակով նրանց ակտիվության աստիճանը դեռևս բարձրացման կարիք ունի:

Որոշակի փորձի կուտակման առումով փորձագիտական խումբը արդյունավետ և օգտակար է համարում բուհի մասնակցությունը որակի ապահովման գործընթացների ներդրմանը և զարգացմանը առնչվող մի շարք միջազգային ծրագրերին: Որակի գործընթացներում ընգդրկված մարդկային, ֆինանսական և նյութատեխնիկական ռեսուրսներն ընդհանուր առմամբ ապահովում են համապատասխան գործառույթների իրականացումը:

Որակի ապահովման համակարգում արտաքին շահակիցների ներգրավվածության (որոնց շրջանում նկատվում է բուհի գործընթացներին մասնակցություն ունենալու հետաքրքրություն) սակավությունը, կարող է թուլացնել որակի ապահովման համակարգի արդյունավետությունը, և այդ ուղղությամբ բուհն ունի որոշակի անելիքներ:

Բուհի կայքը և ցուցասրահը այն միջավայրն են, որոնք ուղղված են որակի գործառույթների վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության ապահովմանը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԳՊԱ-ն բավարարում է չափանիշ 10-ի պահանջները՝ հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ն ունի դեռևս զարգացման փուլում գտնվող որակի ներքին ապահովման համակարգ, որը միջավայր է ստեղծում հաստատության գործունեության շարունակական բարելավման, որակի մշակույթի ձևավորման և տարածման համար, մշակված է որակի ապահովման գործընթացները կանոնակարգող փաստաթղթերի անհրաժեշտ փաթեթ, ռեսուրսներ է տրամադրվում որակի ապահովման գործընթացների իրականացման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Փորձագիտական խումբը ԵԳՊԱ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին **գնահատում է բավարար:**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
I. Առաքելություն և նպատակներ	Բավարար
II. Կառավարում և վարչարարություն	Անբավարար
III. Կրթական ծրագրեր	Անբավարար
IV. Ուսանողներ	Բավարար
V. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարար
VI.Հետազոտություն և զարգացում	Անբավարար
VII. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարար
VIII. Հասարակական պատասխանատվություն	Բավարար
IX. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարար
X. Որակի ներքին ապահովման համակարգ	Բավարար

17 նոյեմբերի 2017թ.

_____

Վարդան Սարգսյան

Փորձագիտական խմբի ղեկավար

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ

Վարդան Ալբերտի Սարգսյան - 1984թ.-ին ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը (ներկայումս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան) ստանալով ինժիներ-տնտեսագետի որակավորում: 1989թ.-ին ստացել է տնտեսագիտության թեկնածուի, իսկ 2009թ.-ին տնտեսագիտության դոկտորի աստիճան: 1993թ.-ին ստացել է դոցենտի աստիճան: Այժմ տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչն է, պրոֆեսոր: Մասնակցել է փոխանակման ծրագրերի և մի շարք գիտաժողովների: Հեղինակ է մոտ 60 հրատարակված գիտական հոդվածների, գրքերի և ուսումնական ձեռնարկների, ներառյալ 16 հոդվածներ հրատարակված Եվրոպայում և ԱՄՆ-ում, 4 մենագրություն, 6 ուսումնական ձեռնարկ:

Լիլիթ Հենրիկի Ֆլջյան – 1992թ.-ին ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի գեղարվեստական դաստիարակության ֆակուլտետի նկարչագծագրական բաժինը: 2003-2004 թթ. աշխատել է Երևանի պետական հումանիտար քոլեջում՝ որպես կիրառական կերպարվեստի ամբիոնի վարիչ: 2009-2013 Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում աշխատել է որպես գեղարվեստի ֆակուլտետի դեկանի տեղակալ: 2015թ.-ից մանկավարժական գիտությունների թեկնածու է, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստների ամբիոնի ասիստենտ: Համատեղության կարգով ԵՊՀ ԻՄ-ի գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի ասիստենտ:

Լոնգմուս Յորգ – 1996թ.-ին ավարտել է Բեռլինի տեխնիկական համալսարանի կրթական գիտությունների բաժինը ստացել մագիստրոսի աստիճան, իսկ 1998թ.-ին ավարտել է նույն համասլարանի ասպրիանտուրան՝ հետազոտելով՝ Ծրագրերի աշխատանքի կազմակերպումն ու գնահատումը: Ներակյումս <<Վերաբաշխում: Սոլիդար աշխարհի ֆոնդ>> հիմնադրամի, ինչպես նաև գերմանական <<ԱԶԶԻՆ>>՝ Ինժիներական, համակարգչային և բնական գիտությունների և մաթամատիկայի ոլորտում հավատարմագրում իրականացնող կազմակերպության անդամ է: 2000 թ.-ից սկսված դասավանդում է Բեռլինի՝ Բեութի տեխնիկական համալսարանում: 2002թ.-ից մինչ օրս աշխատում է նաև <<Սսթենիում>>-ում՝ Բեռլինի կայուն կառավարման ինստիտուտում:

Հերբերտ Յոհան Լոռենց Գրյուներ – Գիտական աստիճանը կրթության բիզնեսի ոլորտում ստացել է Ֆրիդրիխ Ալեքսանդր համալսարանում: Հիմնական առարկայական ուղություններն են. Կրթության բիզնես, առաջնորդություն, մարքերթինգ, հոգեբանություն, անգլերեն: Դիսերտացիայի թեման է եղել. 20-րդ դարի առաջին 30 տարիների գերմաներեն գրականության մեջ վաճառականի կերպարը: Գիտական աստիճանը կրթության բիզնեսի ոլորտում ստացել է Շվեյցարիայի Սուրբ Գալենի համալսարանում: Ներկայումս աշխատում է Սուրբ Գալենի համալսարանում՝որպես մենեջերների համար նախատեսված ուսումնական ծրագրերի դասընթացների տնօրեն, ինչպես նաև դասավանդում է նույն համալսարանում՝դոցենտ է: Իր պրոֆեսիոնալ գործունեությամբ հանդես է գալիս գերմանական մի շարք կազմակերպությունների կառավարման խորհրդում Աշխատում է նաև որպես՝ Ավստրիայի Նոր դիզայն համալսարանի ռեկտոր:

Բրուվայլեր Հանս-Քրիստիան – 2000թ.-ին Ֆրեյբերգի տեխնիկական համալսարանում իրականացրել է դոկտորական հետազոտություն՝նորարարական տնտեսագիտության

ոլորտում: 2001 թ.-ին հետազոտական աշխատանք է իրականացրել նույն համալսարանի բիզնես կառավարում և տնտեսագիտություն բաժնում: 2004-2013թթ.-ին աշխատել է որպես Լեյպզիգի կիրառական գիտությունների <<ԱԿԱԴ>> համալսարանի դասախոս, ինչպես նաև ռեկտոր: 2013 թ.-ից մինչ օրս Զվիկաուի կիրառական գիտությունների արևմտյան սաքսոնական համալսարանի դասախոս է:

Էրիկ Վարդանյան – Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ճարտարապետություն և ինժիներայի բաժնի ուսանող է: Ավարտել երիտասարդ առաջնորդների դպրոցը: ՏԵՄՊՈՒՍԻ ծրագրերում հանդես է եկել որպես ուսանող փորձագետ:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

29.05.2017-01.05.2017

	29.05.2017	***Սկիզբ***	***Ավարտ***	***Տևողություն***	***ASIIN թեմաներ***	***ՈՍԱԿ թեմաներ***
1.	Մասնակցություն ավարտական աշխատանքների ներկայացմանը	12:00	13:00	60 րոպե		
2.	Ճաշի ընդմիջում	13:15	14:00	45 րոպե		
3.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:00	18:00	240 րոպե	Նախաբան, ինքնավերլուծության զեկույցի գնահատում, տարբեր հարցազրույցների/հանդիպումների համար հարցաշարի պատրաստում	

	30.05.2017	***Սկիզբ***	***Ավարտ***	***Տևողություն***	***ASIIN թեմաներ***	***ՈՍԱԿ թեմաներ***
1.	Հանդիպում պրոռեկտորների հետ	9:00	10:30	90 րոպե	**Բաժին 1**. Որակ հասկացություն (սահմանում, պատասխանատվություններ)	**Չափանիշ 1.** Առաքելությունը և նպատակները: **Չափանիշ 2.** Կառավարում և վարչարարություն: **Չափանիշ 6.** Հետազոտություն և զարգացում **Չափանիշ 9.** Արտաքին կապեր
2.	**Ընդմիջում**	**10:30**	**10:45**	**15 րոպե**		
3.	Հանդիպում բաժնի ղեկավարների հետ / Մարդկային ռեսուրսների բաժին, հանրային կապերի պատասխանատու, կարիերայի կենտրոն, հետազոտական կենտրոն/ /Ղեկավար օղակ/	10:45	12:15	90 րոպե	**Բաժին 3.** Ռեսուրսների կառավարում (Նյութական և մարդկային ռեսուրսներ, մարդկային ռեսուրսների զարգացում, կապը հետազոտության հետ, կապը վարչարարության հետ)	**Չափանիշ 7**. Ռեսուրս և ենթակառուցվածք **Չափանիշ 5.** Հարմարությունները և անձնակազմը (պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի հավաքագրում) **Չափանիշ 6.** Հետազոտություն և զարգացում **Չափանիշ 9.** Արտաքին կապեր **Չափանիշ 8.** Հասարակական պատասխանատվություն

5.	**Ճաշ և փորձագիտական խմբի փակ հանդիպում**	**12:15**	**13:15**	**60 րոպե**		
6.	Հանդիպում վարչակազմի անդամների հետ	13:15	14:15	60 րոպե	**Բաժին 3.** Ռեսուրսների կառավարում (Նյութական և մարդկային ռեսուրսներ, մարդկային ռեսուրսների զարգացում, կապը հետազոտության հետ, կապը վարչարարության հետ)	**Չափանիշ 7**. Ռեսուրս և ենթակառուցվածք **Չափանիշ 5.** Հարմարությունները և անձնակազմը (պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի հավաքագրում) **Չափանիշ 6.** Հետազոտություն և զարգացում **Չափանիշ 9.** Արտաքին կապեր **Չափանիշ 8.** Հասարակական պատասխանատվություն
7.	Հանդիպում շրջանավարտների հետ (8-10 մարդ)	14:15	15:00	45 րոպե	**Բաժին 2.** Կրթական ծրագրեր/դասընթացներ/վերապատրաստումներ (համագործակցություն)	**Չափանիշ 2.** Կառավարում և վարչարարություն **Չափանիշ 3.** Կրթական ծրագրեր
8.	**Սուրճի ընդմիջում**	**15:00**	**15:15**	**15 րոպե**		
9.	Հանդիպում գործատուների հետ (8-10 մարդ)	15:15	16:00	45 րոպե	**Բաժին 2.** Կրթական ծրագրեր/դասընթացներ/վերապատրաստումներ (համագործակցություն)	**Չափորոշիչ 2.** Կառավարում և վարչարարություն **Չափորոշիչ 3.** Կրթական ծրագրեր
10.	Հանդիպում կրթության վարչության և ուսումնամեթոդական բաժնի ներկայացուցիչների հետ	16:00	17:00	60 րոպե	**Բաժին 4.** Թաթանցիկություն և փաստաթղթավորում (ծրագրերի/դասընթացների/վերապատրաստումների կանոնները և կարգավորումները,	**Չափանիշ 3.** Կրթական ծրագրեր

					փաստաթղթավորում)	
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն	17:00	17:30	30 րոպե	**Բաժին 1.** Որակ հասկացություն **Բաժին 3.** Ռեսուրսների կառավարում **Բաժին 4.** Թափանցիկություն և փաստաթղթավորում	**Չափանիշ 1.** Առաքելությունը և նպատակները **Չափանիշ 2.** Կառավարում և վարչարարություն
10.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:30	18:00	30 րոպե	Օրվա ընթացքում հավաքագրված տեղեկատվության ամփոփում **Բաժին 1.** Որակ հասկացություն **Բաժին 3.** Ռեսուրսների կառավարում: Հասունության մակարդակի նախնական գնահատում	Օրվա ընթացքում հավաքագրված տեղեկատվության ամփոփում **Չափանիշ 1.** Առաքելությունը և նպատակները **Չափանիշ 2.** Կառավարում և վարչարարություն: Չափորոշիչների և չափանիշերի նախնական գնահատում

	31.05.2017	***Սկիզբ***	***Ավարտ***	***Տևողություն***	***ASIIN թեմաներ***	***ՈԱԱԿ թեմաներ***
1.	Հանդիպում ֆակուլտետների դեկանների հետ	8:30	9:30	60 րոպե	**Բաժին 2.** Կրթական ծրագրեր/դասընթացներ/վերապատրաստումներ (համագործակցություն, քննական համակարգեր և քննությունների կազմակերպում, ձեռքբերումների ճանաչում, աջակցություն	**Չափանիշ 3.** Կրթական ծրագրեր

					և օժանդակությունն)	
2.	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	9:30	10:30	60 րոպե	**Բաժին 2.** Կրթական ծրագրեր/դասընթացներ/վերապատրաստումներ (համագործակցություն, քննական համակարգեր և քննությունների կազմակերպում, ձեռքբերումների ճանաչում, աջակցություն և օժանդակությունն)	**Չափանիշ 3.** Կրթական ծրագրեր
3.	Ընդմիջում	10:30	10:45	15 րոպե		
4.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (ներառյալ 3 կրթական ծրագրերը) (10-12 մարդ)	10:45	11:45	60 րոպե	**Բաժին 1.** Որակ հասկացություն **Բաժին 2.** Կրթական ծրագրեր/ դասընթացներ/ վերապատրաստումներ **Բաժին 3.** Ռեսուրսների կառավարում **Բաժին 4.** Թափանցիկություն և փաստաթղթավորում	**Չափանիշ 2.** Կառավարում և վարչարարություն Չափանիշների և չափորոշիչների նախնական գնահատում **Չափանիշ 3.** Կրթական ծրագրեր **Չափանիշ 5.** Պրոֆեսորադասախոսական և վարչական կազմ
5.	Հանդիպում ռեկտորի հետ	11:50	12:20	30 րոպե	Ողջույնի խոսք, ղեկավարների (մենեջմենթ) կողմից բուհի վերաբերյալ կարճ ներկայացում, ընդհանուր հարցեր	Բուհի ռազմավարության և հետագա զարգացման հետ կապված հարցեր. Չափորոշիչ 1 և 2

6.	Հանդիպում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրի ուսանողների հետ /ներկայացված երեք ծրագրեր/ (10-12 մարդ)	12:25	13:25	60 րոպե	**Բաժին 1.** Որակ հասկացություն **Բաժին 2.** Կրթական ծրագրեր/ դասընթացներ/ վերապատրաստումներ **Բաժին 3.** Ռեսուսների կառավարում **Բաժին 4.** Թափանցիկություն և փաստաթղթավորում	**Չափանիշ 2.** Կառավարում և վարչարարություն : Չափանիշերի և չափորոշիչների նախնական գնահատում **Չափանիշ 3.** Կրթական ծրագրեր **Չափանիշ 4.** Ուսանողներ
7.	**Ճաշ և փորձագիտական խմբի փակ հանդիպում**	**13:30**	**14:30**	**60 րոպե**		
8.	Ռեսուսների դիտարկում (այց դեկանատներ)	14:30	15:15	45 րոպե	**Բաժին 2.** Կրթական ծրագրեր/ դասընթացներ/ վերապատրաստումներ **Բաժին 4.** Թափանցիկություն և փաստաթղթավորում	**Չափանիշ 3.** Կրթական ծրագրեր **Չափանիշ 7.** Ենթակառուցվածք և ռսուսրներ
9.	Ռեսուսրների դիտարկում (այց ամբիոններ)	15:15	16:00	45 minutes	**Բաժին 2.** Կրթական ծրագրեր/ դասընթացներ/ վերապատրաստումներ **Բաժին 4.** Թափանցիկություն և փաստաթղթավորում	**Չափանիշ 3.** Կրթական ծրագրեր **Չափանիշ 7.** Ենթակառուցվածք և ռսուսրներ
10.	Ռեսուսրների գնահատում (լսարաններ, լաբորատորիաներ, գրասենյակներ, գրադարան, մարզասրահ, առողջապահական ծառայություն...)	16:00	16:45	45 րոպե	**Բաժին 3.** Ռեսուրսների կառավարում	**Չափանիշ 7.** Ենթակառուցվածք և ռեսուսրներ
11.	Փաստաթղթերի ուսումնասիրություն	16:45	17:00	45 րոպե	**Բաժին 2.** Կրթական խրագրեր/	**Չափանիշ 3.** Կրթական ծրագրեր

					դասընթացներ/ վերապատրաստումներ	
12.	Փարձագիտական խմբի փակ հանդիպում	17:00	18:00	60 րոպե	Օրվա ընթացքում հավաքագրված տեղեկատվության ամփոփում **Բաժին 2.** Կրթական ծրագրեր/ դասընթացներ/ վերապատրաստումներ **Բաժին 3.** Ռեսուսների կառավարում: Հասունության մակարդակի նախնական գնահատում	Օրվա ընթացքում հավաքագրված տեղեկատվության ամփոփում **Չափանիշ 3.** Կրթական ծրագիր **Չափանիշ 4.** Ուսանողներ **Չափանիշ 5.** Պրոֆեսորադասախոսական և վարչական կազմ: Չափորոշիչների նախնական գնահատում

	01.06.2017	*Սկիզբ*	*Ավարտ*	*Տևողություն*	*ASIIN թեմաներ*	*ՈՒԱԿ թեմաներ*
1.	Հանդիպում ՈԱ կենտրոնի ներակայացուցիչների հետ	8:30	9:30	60 րոպե	**Բաժին 1.** Որակ հասկացություն (սահմանում, պատասխանատվություններ)	**Չափանիշ 10.** Որակի ներքին ապահովում
2.	Հանդիպում բակալավրի և մագիստրատուրայի ուսանողների հետ (10-12)	09:30	10:30	60 րոպե		**Չափանիշ 3.** Կրթական ծրագրեր **Չափանիշ 5.** Պրոֆեսորադասախոսական և վարչական կազմ
3.	**Ընդմիջում**	**10:30**	**10:45**	**15 րոպե**		
4.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ/ եթե ցանկություն կա քննարկելու փորձագիտական խմբի հետ որևէ հարց/	10:45	11:15	30 րոպե		
5.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	11:15	12:00	45 րոպե	Հավաքագրված տեղեկատվության ամփոփում: Հասունության մակարդակի նախնական գնահատում	Չափանիշերի և չափորոշիչների գնահատում
6.	**Ճաշ և փորձագիտական խմբի փակ հանդիպում**	**12:00**	**13:00**	**60 րոպե**		

7.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	13:15	15:00	120 րոպե	Հասունության մակարդակի գնահատում	Չափանիշերի և չափորոշիչների գնահատում
8.	**Ընդմիջում**	**15:00**	**15:30**	**30 րոպե**		
9.	Եզրափակիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	15:30	16:00	30 րոպե		

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում
1	ԵԳՊԱ-ի կանոնադրություն
2	ԵԳՊԱ-ի Ռազմավարական ծրագիր 2012-2016թթ.
3	ԵԳՊԱ-ի Ռազմավարական ծրագիր 2017-2021թթ.
4	ԵԳՊԱ-ի մասնագիտությունների ցանկ
5	ԵԳՊԱ-ի մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և վերանայման ձեռնարկ
6	Մասնագիտության կրթական ծրագրերի և ՀՀ ՈԱՇ-ի միջև համադրելիության ապահովման ուղեցույց
7	ԵԳՊԱ ռազմավարական ծրագրի նախագծման և մշակման ուղեցույց
8	ԵԳՊԱ-ի կողմից տրամադրվող տեղեկատվության արդյունավետության և մատչելիության վերաբերյալ դիմորդների հարցման կանոնակարգ
9	ԵԳՊԱ-ում ընդունելության կարգի արդյունավետության վերաբերյալ առաջին կուրսեցիների հարցման կանոնակարգ
10	ԵԳՊԱ-ում դասընթացի մեթոդաբանության արդյունավետության վերաբերյալ հարցման կանոնակարգ
11	ԵԳՊԱ-ում գնահատման համակարգի արդյունավետության վերաբերյալ դասախոսների և ուսանողների հարցման կանոնակարգ
12	ԵԳՊԱ-ի ռեսուրսների և ծառայությունների արդյունավետության վերաբերյալ հարցման կանոնակարգ
13	ԵԳՊԱ-ում հետազոտական գործունեության արդյունավետության վերաբերյալ դասախոսների և ուսանողների հարցման կանոնակարգ
14	ԵԳՊԱ-ի վարչարարության արդյունավետության վերաբերյալ դասախոսների հարցման կանոնակարգ
15	ԵԳՊԱ-ի արտաքին կապերի բաժնի գործունեության գնահատման վերաբերյալ ուսանողների հարցման կանոնակարգ
16	ԵԳՊԱ-ում օտար լեզվի իմացության վերաբերյալ վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի հարցման կանոնակարգ
17	ԵԳՊԱ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցման կանոնակարգ
18	ԵԳՊԱ-ի ՄԿԾ-ների արդյունավետության վերաբերյալ գործատուների հարցման կանոնակարգ
19	ԵԳՊԱ-ի ստորաբաժանումների տարեկան գործունեության պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման կարգ
20	Ստորաբաժանումների տարեկան պլանավորման ձևաչափ և օրինակ
21	Ստորաբաժանումների եռամսյակային հաշվետվությունների ձևաչափ և օրինակ
22	ԵԳՊԱ-ի կողմից իրականացվող հարցումների ժամանակացույց
23	ԵԳՊԱ ռեկտորի տարեկան հաշվետվություններ
24	ԵԳՊԱ-ի կազմակերպական կառուցվածքը
25	ԵԳՊԱ-ի որակի կառավարման համակարգը
26	ԵԳՊԱ ստորաբաժանումների կանոնակարգերի ձևաչափը
27	ԵԳՊԱ ներքին կարգապահական կանոնակարգ
28	ԵԳՊԱ-ում իրականացվող դրամաշնորհային ծրագրերի ցուցակ
29	ԵԳՊԱ ՊՈԱԿ-ը հիմնադրամի վերակազմավորելու հիմնավորում
30	ԵԳՊԱ-ի որակի ապահովման ձեռնարկ

31	ԵԳՊԱ-ի կողմից տրամադրվող տեղեկատվության արդյունավետության և մատչելիության վերաբերյալ դիմորդների հարցման վերլուծություն
32	ԵԳՊԱ-ում ընդունելության կարգի արդյունավետության վերաբերյալ առաջին կուրսեցիների հարցման վերլուծություն
33	ԵԳՊԱ-ում դասընթացի մեթոդաբանության արդյունավետության վերաբերյալ հարցման վերլուծություն
34	ԵԳՊԱ-ում գնահատման համակարգի արդյունավետության վերաբերյալ դասախոսների և ուսանողների հարցման վերլուծություն
35	ԵԳՊԱ-ի ռեսուրսների և ծառայությունների արդյունավետության վերաբերյալ հարցման վերլուծություն
36	ԵԳՊԱ-ի վարչարարության արդյունավետության վերաբերյալ դասախոսների հարցման վերլուծություն
37	ԵԳՊԱ-ի արտաքին կապերի բաժնի գործունեության գնահատման վերաբերյալ ուսանողների հարցման վերլուծություն
38	Ուսանողական համայնքի կողմից անցկացվող հարցում և վերլուծություն
39	ԵԳՊԱ-ի «Համակարգչային գրաֆիկա» (բակալավրի կրթական աստիճան) և «Դիզայն» (մագիստրոսի կրթական աստիճան) ՄԿԾ-ների գանհատման փորձագիտական զեկույց
40	ԵԳՊԱ որակի կառավարման կրկնակի համակարգ
41	ԵԳՊԱ-ի ստորաբաժանումների կանոնակարգ՝ արխիվ
42	ՄԿԾ-ի արդյունավետության գնահատումը գործատուների կողմից
43	ՄԿԾ-ի արդյունավետության գնահատումը շրջանավարտների կողմից
44	ԵԳՊԱ-ի մասնագիտական կողմնորոշման և տեղեկատվության կառավարման կենտրոնի տեղեկատվության հավաքագրման ընթացակարգ
45	ԵԳՊԱ ուսանողների զբաղվածության վերաբերյալ հարցման վերլուծություն
46	ԵԳՊԱ շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ հարցման վերլուծություն
47	ԵԳՊԱ-ի հրապարակային տեղեկատվության տարածման քաղաքականություն և ընթացակարգ
48	ԵԳՊԱ-ի ուսանողի ձեռնարկ
49	Համակարգչային գրաֆիկա ՄԿԾ-ի նկարագիրը
50	Դիզայն ՄԿԾ-ի նկարագիրը
51	ՄԿԾ-ի ինքնավերլուծություն (Համակարգչային գրաֆիկա բակալավրի և Դիզայն մագիստրոսական կրթական ծրագրերի)
52	Հագուստի մոդելավորում ՄԿԾ-ի նկարագիրը
53	4 ՄԿԾ-երի համար համեմատական վերլուծություններ
54	ՄԿԾ-երի ՈԱՇ-ի հետ համադրելիության ապահովում և ստուգման ուղենիշներ
55	Դասընթացի նկարագրի ձևաչափ
56	Համակարգչային գրաֆիկա ՄԿԾ-ի դասընթացի նկագրերի օրինակներ (2)
57	Հագուստի մոդելավորում ՄԿԾ-ի դասընթացի նկագրերի օրինակներ (2)
58	Դիզայն ՄԿԾ-ի դասընթացի նկագրերի օրինակներ (2)
59	Ուսանողի գնահատման համակարգ. հայեցակարգային դրույթներ
60	Գնահատման համակարգի հայեցակարգի վերանայման մասին որոշում, ռեկտորատի նիստի արձանագրություն
61	Ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգ
62	Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման ուղեցույց
63	ԵԳՊԱ ուսանողների շարժունության կարգ

64	ՀՀ բուհերում Կրեդիտների փոխանակման և կուտակման եվրոպական համակարգի կիրառման ուղենիշների ուղեցույց
65	ԵԳՊԱ-ում ՄԿԾ-երի մշտադիտարկման, վերանայման և բարելավման ուղղությամբ ՈԱ գործընթացների վերլուծություն
66	Բակալավրի կրթական ծրագրով ընդունելության ներքին քննությունների անցկացման կարգ
67	ԵԳՊԱ ընդունելության քննությունների հանձնարարություններ և գնահատման չափանիշեր
68	ԵԳՊԱ-ի մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության քննությունների անցկացման կարգ
69	Ասպիրանտուրայի ընդունելության ընթացակարգ
70	ԵԳՊԱ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգ
71	Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ կնքված պայմանագրեր
72	Հաստատությունների ցանկը
73	ՀՀ բուհերում հեռացման (ազատման) և վերականգման կարգ
74	ԵԳՊԱ ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցման կարգ
75	ԵԳՊԱ ուսանողական խորհրդի կանոնադրություն և միջոցառումների ցանկ
76	Ֆակուլտատիվ դասընթացների մասնակիցների ցանկ
77	Ուսանողների շրջանում կատարված Ֆոկուս խմբերի վերլուծություն
78	Պրակտիկայի կազմակերպությունների ցուցակ
79	Կարիերայի կենտրոնի միջոցառումների ցուցակ
80	Ուսանողի հետ կնքվող պայմանագիր
81	ԵԳՊԱ-ի հիմնական և համատեղությամբ դասավանդողների կազմը ըստ ամբիոնների (գիտական աստիճաններ և կոչումներ) ԵԳՊԱ ստորաբաժանումների և աշխատատեղերի տարակարգերի մասին կանոնակարգ
82	Դասընթացի արդյունավետության գնահատման հարցաթերթեր
83	Ամբիոնների աշխատակազմի աշխատանքի արդյունավետության գնահատման ամփոփ վերլուծություն և ձևաչափ
84	Դասավանդողների վերապատրաստումների թեմաները
85	Դասախոսական կազմի տարիքային բաշխվածության գրաֆիկ
86	ԵԳՊԱ-ի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական աճին նպաստող գործընթացների ընթացակարգ
87	Վարչական աշխատակազմի ցանկը՝ ըստ հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների
88	ԵԳՊԱ հետազոտական կենտրոնի ռազմավարությունը և հետազոտության ուղղությունները
89	ԵԳՊԱ հետազոտական կենտրոնի գործառույթները և կառուցվածքը
90	Գեղանկարի, գրաֆիկայի, դիզայնի և կիրառական արվեստի գծով արվեստաբանության թեկնածուի գիտական աստիճանի շնորհման համար ատենախոսության պատրաստման ուղեցույցի նախագիծ
91	ԵԳՊԱ Հետազոտողի (PhD) նոր պիլոտ ծրագիր
92	ԵԳՊԱ Հետազոտողի (PhD) նոր պիլոտ ծրագրի վերաբերյալ ինքնավերլուծություն
93	Տարեգրքում հրապարակվող հոդվածներին ներկայացվող պահանջներ
94	Տարեգիրք № 1, 2 և 3
95	Հետազոտական միջոցառումներին մասնակցության ցուցակ

96	ԵԳՊԱ-ի 2014-2017 թվականներին հրատարակված գիտական հոդվածների ցանկ
97	2014-2017 թվականների ընթացքում միջազգային գիտաժողովներին մասնակցած դասախոսների ցուցակ
98	Հագուստի մոդելավորման լաբորատորիայի սարքավորումների ցանկ
99	Կիրառական արվեստի լաբորատորիայի սարքավորումների ցանկ
100	Դիզայնի ամբիոնի մանրակերտի լաբորատորիայի սարքավորումների ցանկ
101	Դիզայնի ամբիոնի համակարգչային լաբորատորիայի սարքավորումների ցանկ
102	Մետաղի արհեստանոցի սարքավորումների ցանկ
103	Համակարգչային նախագծման լաբորատորիայի սարքավորումների ցանկ
104	Գրաֆիկայի լաբորատորիայի սարքավորումների ցանկ
105	Կերպարվեստի ֆակուլտետի համակարգչային լաբորատորիայի սարքավորումների ցանկ
106	Գյումրու մասնաճյուղի լաբորատորիայի սարքավորումների ցանկ
107	Դիլիջանի մասնաճյուղի լաբորատորիայի սարքավորումների ցանկ
108	ԵԳՊԱ փաստաթղթաշրջանառության սխեմա
109	Բուկլետներ
110	Բրոշուրնե
111	Գրքեր
112	ԵԳՊԱ միջազգայնացման ռազմավարություն
113	ԵԳՊԱ-ի և այլ հաստատությունների միջև համագործակցության համաձայնագրերի ցուցակ
114	ՈԱ և ինքնագնահատման բաժնի կանոնակարգ
115	Արտաքին կապերի բաժնի արդյունավետության գնահատում. գործիք և նկարագիր
116	Գնահատման համակարգի արդյունավետության գնահատում պրոֆեսորադասախոսական կազմի կողմից. գործիք և նկարագիր
117	Գնահատման համակարգի արդյունավետության գնահատում ուսանողների կողմից. գործիք և նկարագիր
118	Դասընթացի արդյունավետության գնահատում. գործիք և նկարագիր
119	Աշխատակիցների կատարողականի գնահատում. գործիք և նկարագիր
120	Ընդունելության գործընթացի արդյունավետության գնահատում 1-ին կուրսեցիների շրջանում. գործիք և նկարագիր
121	Հետազոտության արդյունավետության գնահատում. գործիք և նկարագիր
122	ՄԿԾ-ի գնահատում գործատուի կողմից. գործիք և նկարագիր
123	ՄԿԾ-ի գնահատում շրջանավարտների կողմից. գործիք և նկարագիր
124	Ռեսուրսների և ծառայությունների գնահատում ուսանողների կողմից. գործիք և նկարագիր
125	Ռեսուրսների և ծառայությունների գնահատում դասախոսների կողմից. գործիք և նկարագիր
126	Վարչարարության արդյունավետության գնահատում. գործիք և նկարագիր
127	ԵԳՊԱ-ի վերաբերյալ տեղեկության և դրա տարածման միջոցների արդյունավետության գնահատում դիմորդների շրջանում. գործիք և նկարագիր
128	Օտար լեզվի իմացության վերաբերյալ վարչական, դասավանդող և ուսումնաօժանդակ կազմի շրջանում հարցում. գործիք և նկարագիր
129	ՈԱ կենտրոնը հիմնելու և կանոնակարգը հաստատելու մասին ԵԳՊԱ-ի ռեկտորի հրաման
130	Մագիստրոսական թեզեր
131	Տարեգրքեր

132	Համագործակցության հուշագիր Երևանի թատրոնի և կինոյի ինստիտուտի և Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի հետ
133	ՄԿԾ փաթեթներ
134	Բենչմարքինգի արդյունքներ
135	Գորաածուների հետ հարցումների վերլուծություններ

1. **Լսարաններ**
2. **Արվեստանոցներ**
3. **Դեկանատներ** (Կերպարվեստի ֆակուլտետ, Դիզայինի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետ)
4. **Ամբիոններ** (Գեղանկարի ամբիոն, Գրաֆիկայի ամբիոն, Քանդակագործություն, Գրաֆիկա, Կիրառական արվեստ, Համակարգչային գեղարվեստական նախագծում, Կերպարվեստի պատմություն և տեսություն)
5. **Կաբինետ-լսարաններ** (Ալբերտ և Թովէ բոյաջյան ցուցասրահ)
6. **Լաբորատորիաներ** (Քանդակագործության լաբորատորիա, խեցեգործության լաբորատորիա, Գեղանկարճության լաբորատորիա)
7. **Կոնֆերանս դահլիճ**
8. **Համակարգչային լսարաններ**
9. **Գրադարան**
10. **Ընթերցասրահ**

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **ԵԲԿՏ** _ եվրոպական բարձրագույն կրթական տարածք
2. **ԵԳՊԱ**_Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա
3. **ԵԿԿՓՀ** _ եվրոպական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգ
4. **ՀՀ** _ Հայաստանի հանրապետություն
5. **ՄԿԾ** _ մասնագիտության կրթական ծրագիր
6. **ՄՈՒՀ** _ մասնագիտական ուսումնական հաստատություն
7. **ՈԱ** _ Որակի ապահովում
8. **ՈԱԱԿ**_"Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն" հիմնադրամ
9. **ՈԱԵՀՈՒ** _ որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշեր
10. **ՈԱՇ** _ որակավորումների ազգային շրջանակ
11. **ՊԴԿ** _ պրոֆեսորադասախոսական կազմ
12. **ՊԻԳԲ** _ պլանավորել-իրականացնել-գնահատել-բարելավել
13. **ՌԾ** _ Ռազմավարական ծրագիր
14. **ՌՊ** _ Ռազմավարական պլան
15. **ՌԻԽ** _Ուսանողական խորհուրդ